Հայաստանի Հանրապետությունում կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը

Զեկույցը մշակվել է Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ վերլուծելու Հայաստանում կանանց իրավունքների պաշտպանության դինամիկան և իրականացման մեխանիզմները:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Հայաստանի Հանրապետությունում կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը

Ք.գ.թ. Անահիտ Պարզյան
Եվրոպայի խորհրդի ազգային խորհրդատու

Գրախոս Լուիս Հուփեր
Եվրոպայի խորհրդի միջազգային խորհրդատու

2024 թվականի հուլիս

Եվրոպայի խորհուրդ

Սույն աշխատությունում ներկայացված կարծիքները հեղինակների պատասխանատվությամբ են և պարտադիր չէ. որ դրանք արտահայտեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Սույն փաստաթղթերի ամբողջական կամ մասնակի վերարտադրման կամ թարգմանության վերաբերյալ բոլոր հարցումները պետք է հասցեագրվեն Հաղորդակցությունների տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթին վերաբերող բոլոր այլնամակ-ները պետք է հասցեագրվեն ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության Գենդերային հավասարության բաժնին (F-67075 Strasbourg Cedex կամ gender.equality@coe.int).

Կազմը և էջադրումը.
Անտարես Մեդիա Հոլդինգի

Լուսանկարները՝
© Shutterstock

© Եվրոպայի խորհուրդ, հոկտեմբեր 2024 թվական

Բովանդակություն

1. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ 5

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 10

3.1. Հարցում. արդյունքները 10

3.1.1. Հարցաշար 1. արդարադատություն իրականացնող և իրավապահ մարմինների տեսակետները 11

3.1.2. Հարցաշար 2. բռնություն վերապրածների տեսակետները 12

3.1.3. Հարցաշար 3. աջակցություն ցուցաբերող անձանց տեսակետները 14

3.1.4. Հարցման եզրակացությունները 15

3.2. Միջազգային իրավական շրջանակը 16

3.2.1. ԿՆԽՎԿ-ի՝ Հայաստանի 7-րդ պարբերական զեկույցը 16

3.2.2. Եվրոպայի խորհուրդը. Ստամբուլի կոնվենցիան 17

3.2.3. ԳՐԵՎԻՈ-ի թիվ 1ընդհանուր առաջարկությունը 18

3.2.4. Այլ համապատասխան ստանդարտները 19

3.3. Սահմանումները և եզրույթները 19

3.3.1. Կանանց նկատմամբ թվային բռնության ձևերը 20

1. Առցանց ոտնձգությունը և կիբեռբուլինգը 21

2. Վրեժխնդրության նպատակով պոռնագրաֆիան և պատկերների՝ առանց համաձայնության տարածումը 21

3. Հետամտումը և հսկողությունը 22

4. Առցանց սեռական շահագործումը 23

5. Առցանց ժամադրության ժամանակ բռնությունը 23

6. Առցանց բռնարարքն ընտանիքում բռնության համատեքստում 24

7. Կիբեռշորթումը և ֆինանսական շահագործումը 24

8. Հոգեբանական բռնության թվային հարթությունը 24

3.4 Հայաստանի իրավական և գործնական իրավիճակի վերլուծությունը 25

3.4.1. Հայաստանի իրավական շրջանակը 26

3.4.2. Առցանց սեռական ոտնձգությունը 26

3.4.3. Առցանց և տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հետամտումը 27

3.4.4. Հոգեբանական բռնության թվային հարթությունը 28

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ և ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 29
5. ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 30
5.1. Իրավական շրջանակը 30
5.2. Կանխարգելումը 31
5.3. Պաշտպանությունը 32
5.4. Քրեական հետապնդումը 33
5.5. Համակարգված քաղաքականությունը 35
6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 37
7. ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ 38
7.1. Իրավական շրջանակը 38
7.2. Կանխարգելումը 39
7.3. Պաշտպանությունը 39
7.4. Քրեական հետապնդումը 40
7.5. Համակարգված քաղաքականությունը 41
8. ՀՂՈՒՄՆԵՐ 42

1. Ամփոփ նկարագիրը

Սույն զեկույցը պատրաստվել է «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» Եվրոպայի խորհրդի ծրագրի շրջանակներում՝ Հայաստանում բռնության թվային հարթությունում կանանց իրավունքների պաշտպանության դինամիկան և իրականացման մեխանիզմները վերլուծելու համար՝ դրանք միջազգային իրավական դրույթներին և քաղաքականության չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Թվային ծառայությունների լայն տարածումը հանգեցրել է կիբեռհանցագործությունների, այդ թվում՝ գենդերի հիմքով թվային բռնության դեպքերի աճին: Իրավական կարգավորումները լրամշակելուց բացի, առկա է նաև, սպառնալիքները հասցեագրելու և մեղմելու անհրաժեշտություն: Սույն զեկույցում ներկայացված են Հայաստանում իրականացման ենթակա՝ հիմնական իրավական ու ինստիտուցիոնալ փոփոխությունները, շեշտադրված է մասնագետների իրազեկվածության մակարդակի բարձրացման և ուսուցման անհրաժեշտությունը, ինչպես նաև ներկայացված են թվային բռնությունից պաշտպանության ուժեղացմանն ուղղված առաջարկություններ:

Զեկույցում ներկայացված են իրավաբանական անձանց, զոհերի և աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների շրջանում իրականացված հարցումների հիմնական արդյունքները: Հարցումներով վեր են հանվել իրազեկվածության, օրենսդրական շրջանակի և աջակցության համակարգերի զգալի բացերը, ինչպես նաև շեշտադրվել է կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարի համապարփակ ռազմավարությունների մշակման խիստ անհրաժեշտությունը:

Հարցումների արդյունքները

Հարցումների արդյունքում ընդգծվել է Հայաստանում կանանց նկատմամբ թվային բռնությունը հասցեագրելու համար օրենսդրական շրջանակի ընդլայնման, իրազեկվածության մակարդակի բարձրացման և աջակցության համակարգերի կատարելագործման խիստ անհրաժեշտությունը: Թե՛ իրավական ոլորտի մասնագետները, թե՛ զոհերը, և թե՛ աջակցություն ցուցաբերող կազմակերպությունները նշում են զգալի բացերի մասին՝ շեշտադրելով համապարփակ կրթության, օրենսդրական բարեփոխումների և տեխնոլոգիական հագեցվածության անհրաժեշտությունը՝ թվային դարաշրջանում կանանց պաշտպանելու համար:

Իրավապահ մարմինների և դատական համակարգի արձագանքը

Իրազեկվածության և օրենսդրական բացերը.

Հարցմանը մասնակցած իրավական ոլորտի մասնագետների 78%-ն ընդունում է, որ տեխնոլոգիաների արագ զարգացման արդյունքում ի հայտ են եկել բռնության նոր տեսակներ, որոնք գործող օրենսդրությամբ հնարավոր չէ պատշաճ կերպով հասցեագրել:

- Նրանց 82%-ը կարծում է, որ թվային բռնության վերաբերյալ օրենսդրության շրջանակի ընդլայնումը չափազանց կարևոր է, սակայն միայն 43%-ն է կարծում, որ այն պետք է դասակարգվի որպես առանձին՝ գենդերի հիմքով բռնություն:
- Զարմանալի է, որ 55%-ը չգիտի կանանց նկատմամբ թվային բռնության տարածվածության մասին, և միայն 13%-ն է այն համարում բարդ խնդիր, որը պահանջում է հատուկ միջամտություն:

Կարողությունների զարգացման անհրաժեշտությունը.

- Հարցվածների 95%-ը շեշտադրում է կրթական ծրագրերի և միջազգային փոխանակումների կարևորությունը՝ թվային բռնության զոհերին հայտնաբերելու և պաշտպանելու հարցում մասնագետների կարողությունների զարգացման համար:

Զոհերի փորձառությունները

Թվային բռնության տարածվածությունը.

- Զոհերի 98%-ը հաղորդել է, որ բացի բռնարարքի մյուս ձևերին ենթարկվելուց, ենթարկվել է նաև թվային բռնության:
- Զոհերի 74%-ը հաղորդել է կիբեռհետամտման ենթարկվելու մասին, ինչը զգալիորեն ազդել է նրանց սոցիալական շփումների և կյանքի որակի վրա: 34%-ը հաղորդել է ֆինանսական խարդախությունների ենթարկվելու մասին:
- Բռնություն գործադրող անձինք մեծամասամբ նախկին զուգընկերներն էին, և միայն փոքր տոկոսը կազմել են ծանոթությունների համար նախատեսված հավելվածներից անհայտ անձինք:

Աջակցության բացակայությունը և հաղորդում ներկայացնելու մարտահրավերները.

- Բռնության զոհերը նշել են թվային բռնության դեպքում հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) և Կանանց աջակցման կենտրոնների կողմից թիրախավորված աջակցության բացակայության մասին:
- Միայն 23%-ն է դեպքերի առթիվ հաղորդում ներկայացրել ոստիկանություն, սակայն պատասխան չի ստացվել՝ նշելով իրավապահ մարմինների կարողություններում այդ խնդիրները հասցեագրելու բացի մասին:

Կին բարձրաստիճան պաշտոնատար անձինք և հասարակական գործիչները

Թվային հարձակումների փորձառությունը.

- Հարցված կին բարձրաստիճան պաշտոնատար անձանց և հասարակական գործիչների 78%-ը ենթարկվել է գենդերի հիմքով թվային հարձակումների:
- Նրանցից 68%-ը դիտարկել է այդ հարձակումների պատճառով հասարակական կյանքից հեռանալը, ինչը վկայում է անձնական և մասնագիտական կյանքում այդ երևույթի ծանր ազդեցության մասին:

Դեպքերի օրինակները.

- Հաղորդումներ են ներկայացվել դիփֆեյքեր ստեղծելու սպառնալիքների և անձնական նկարների չթույլատրված տարածման դեպքերի առնչությամբ:
- Բռնության զոհերն իրավական տեսակետից իրենց պաշտպանված չեն զգացել, ուստի հաճախ վախի ու ամոթի պատճառով դեպքերի առթիվ հաղորդումներ չեն ներկայացրել:

ՀԿ-ները և Կանանց աջակցման կենտրոնները.

Իրազեկվածությունը և տեխնոլոգիական հնարավորությունները.

- ՀԿ-ների և Կանանց աջակցման կենտրոնների մասնակիցների 100%-ն ընդունում է կանանց նկատմամբ թվային բռնության խնդրի առկայությունը:
- Նրանց 78%-ը նշում է Կանանց աջակցման մասնագիտացված կենտրոններին կրթական և իրազեկվածության մակարդակի բարձրացման համար նախատեսված նյութերի տրամադրման հրատապ անհրաժեշտությունը՝ բռնության զոհերին հայտնաբերելու ու պաշտպանելու համար:
- Այնուհետև, 85%-ը շեշտադրում է կիբեռհանցագործներին հետևելու և կանխելու համար նախատեսված տեխնոլոգիական գործիքների առկայության անհրաժեշտությունը, թեև միայն 25%-ն է նշում այն օրենսդրական բարելավումների անհրաժեշտության մասին, որոնք մասնավորապես ուղղված են թվային բռնության հասցեագրմանը:

Եզրակացություններ

Հարցման արդյունքները ցույց են տվել իրազեկվածության, հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմների և բռնության զոհերին հասանելի աջակցություն ցուցաբերող ծառայությունների զգալի բացերը: Ավելին, տվյալները ցույց են տալիս թիրախավորված կրթական արշավների, իրավական շրջանակի ընդլայնման և բազմոլորտ ամուր համագործակցության հրատապ անհրաժեշտության մասին՝ թվային բռնության ազդեցություններն արդյունավետ կերպով հասցեագրելու և մեղմելու համար: Հարցման տվյալները կարևոր հիմք են Հայաստանի թվային դաշտում կանանց և աղջիկների իրավունքների ու անվտանգության պաշտպանությանն ուղղված համապարփակ ռազմավարությունների և միջամտությունների մշակման համար:

2. Ներածություն

21-րդ դարում համատարած անցում կատարվեց դեպի թվային տիրույթ՝ ազդելով առօրյա կյանքի տարբեր ոլորտների վրա: Թե՛ մասնավոր, թե՛ հանրային հատվածները (ժամանց, ծանոթություններ, կրթություն, ֆինանսներ, առողջապահություն, սննդի արդյունաբերություն և այլ) ենթարվեցին թվային փոխակերպման: Դա պայմանավորված է թվային ծառայությունների արագ տարածմամբ, օգտագործողների շրջանակի ընդլայնմամբ և տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում՝ սմարթֆոնների լայն հասանելիությամբ ինչի հիմքում են տեխնոլոգիաների արագությունը, մատչելիությունն ու ներառականությունը (Սահակյան, 2024թ.): Թվային հարթությունն արագացրել է բռնի և ագրեսիվ գործողությունները՝ հնարավորություն տալով աննախադեպ մասշտաբով թիրախավորել կանանց՝ մատչելի և հասանելի միջոցների շնորհիվ:

Այժմ Հայաստանում ինտերնետ կապի ամենաձեռնտու ու ամենամատչելի ձևի՝ շարժական ինտերնետի օգտվողների թիվը շուրջ 1,87 միլիոն է: Ակնկալվում է, որ մինչև 2024 թվականի ավարտը երկրում համացանցից օգտվողների ընդհանուր թիվը կհասնի 2,44 միլիոնի («Statista» վիճակագրական հարթակ, 2024): Համացանցից օգտվողների այս արագ աճը կմեծացնի առցանց փոխգործակցությունները և գործողությունները, որոնք իրենց հերթին կարող են հանգեցնել կիբեռհանցագործությունների և վնասաբեր առցանց վարքագծի, այդ թվում՝ թվային բռնության տարածմանը: Եթե տղամարդիկ հիմնականում թիրախավորվում են ֆինանսական կամ տեղեկատվական խարդախությունների համար, կանայք, մեծ հավանականությամբ, թիրախավորվում են թվային բռնության՝ մասնավորապես, գենդերային տեսակների համար, որոնք չեն սահմանափակվում ֆինանսական և տեղեկատվական խարդախություններով: Տեխնոլոգիաների նոր ձևերը, ինչպես օրինակ՝ գեներատիվ արհեստական բանականությունը, նոր միջոցներով բռնարարքների ծավալների ավելացման և ավտոմատացման հնարավորություններ են ստեղծում՝ լրացուցիչ նոր մարտահրավերներ հարուցելով իրավապահների և դատական համակարգի համար (Չաուդհուրի, 2023թ.):

Կիբեռսպառնալիքներն այնքան արագ են զարգանում և տարածվում, որ հաճախ գործող օրենսդրական շրջանակն ի զորու չէ կանոնակարգելու դրանք: Հետևաբար, տնտեսական, ֆիզիկական և հոգեբանական կիբեռբուլինգի և կիբեռխոշտանգումների ենթարկված անձինք, հատկապես կանայք և աղջիկները հաճախ մնում են առանց իրավական պաշտպանության համապատասխան միջոցների և բախվում են պաշտպանության ու արդարադատության մատչելիության զգալի մարտահրավերների: Կիբեռհանցագործները թիրախավորում են նրանց անձնական և մասնագիտական կյանքը՝ խոչընդոտելով նրանց մասնագիտական առաջընթացը և անձնական բարեկեցությունը: Սա կարող է հանգեցնել խոցելիության, մեկուսացման, սթրեսի և նույնիսկ անկանխատեսելի ու ծայրահեղ գործողությունների, այդ թվում՝ ինքնասպանության:

Ի տարբերություն ֆիզիկական բռնության և խոշտանգումների ռիսկի, որը երբեմն կարող է նվազեցվել՝ գտնվելու վայրը փոխելով կամ վնասի աղբյուրը վերացնելով, կիբեռխոշտանգումները և կիբեռբուլինգը սահմանափակված չեն աշխարհագրական տեղանքով: Համացանցի

դեպքում նույն տրամաբանությունը չի կարող գործել, քանի որ համացանցից առհասարակ չօգտվելն անիրատեսական է: Կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը սահմաններ չի ճանաչում և տեղի է ունենում անդադար, որի վրա չեն ազդում ժամային գոտիները: Հետևաբար, այդ կիբեռհանցագործությունների և ոտնձգությունների ինտենսիվությունն ու շարունակականությունը բազմապատկվում են՝ ներհատուկ մարտահրավերներ առաջացնելով բռնության զոհերի համար:

Սույն զեկույցում ներկայացված են Հայաստանում իրականացման ենթակա որոշ առաջնային կարևոր իրավական և ինստիտուցիոնալ փոփոխություններ՝ այս նորաստեղծ սպառնալիքի դեմ պայքարելու համար: Ի հավելումն այդ փոփոխությունների, զեկույցում ներկայացված են այն լրացուցիչ ջանքերը, որոնք անհրաժեշտ են կանանց նկատմամբ բռնության թվային ձևերի մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու և թվային հարթությունում գենդերի հիմքով բռնության զոհերի կամ բռնություն գործադրող անձանց հետ աշխատող բոլոր մասնագետների համապատասխան ուսուցումն ապահովելու համար, որպեսզի վերջիններս կարողանան բացահայտել կանանց և աղջիկների նկատմամբ տեխնոլոգիաների արագ զարգացման և ընդունման արդյունքում ի հայտ եկող բռնության բոլոր ձևերը և արձագանքել դրանց:

3. Հետազոտության շրջանակը և մեթոդաբանությունը

Սույն զեկույցի արդյունքները հիմնված են միջազգային և հայաստանյան օրենսդրական շրջանակի վերլուծության, կամերալ հետազոտությունների և տեղում իրականացվող աշխատանքների վրա: Այդ գործընթացի ժամանակ ուսումնասիրվել են գրավոր զեկույցները, խորհրդարանական քննարկումները, լրատվամիջոցների կողմից հավաքագրված տեղեկությունները, անձնական հարցազրույցները և սոցիալական ու մշակութային ընկալումների ընդհանուր համեմատական վերլուծությունները: Բացի դրանից, հարցումներ են անցկացվել ոստիկանությունում, դատախազությունում, դատական և այլ փոխկապակցված մարմիններում, ինչպես նաև հասարակական կազմակերպություններում, այդ թվում՝ ընտանիքում բռնության ենթարկված Կանանց աջակցման կենտրոններում:

Հետազոտության շրջանակը սահմանելու և հետազոտությունն իրականացնելու ժամանակ դիտարկվել են Եվրոպայի խորհրդի հետևյալ առանցքային փաստաթղթերը՝

- Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Եվրոպայի խորհրդի պայմանագրերի շարք (ԵԽՊԾ) թիվ 210) (Ստամբուլի կոնվենցիա),
- «Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության մասին» Կանանց նկատմամբ բռնության հարցերով փորձագետների խմբի (ԳՐԵՎԻՈ) թիվ 1 ընդհանուր առաջակություն,
- Կանանց նկատմամբ խտրականության և բռնության հարցերով անկախ փորձագիտական մեխանիզմների հարթակ (EDVAW հարթակ), Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության վերաբերյալ թեմատիկ փաստաթուղթ (EDVAW (2022թ.)), և
- «Կանանց և աղջիկների պաշտպանությունը բռնությունից թվային դարաշրջանում» ուսումնասիրություն (Եվրոպայի խորհրդի ուսումնասիրություն (Վան դեր Ուիլկե, 2021թ.)):

3.1. Հարցում. արդյունքները

Թվային բռնությանն արձագանքելու կարողությունները, զոհերի խոցելիությունն ու թվային բռնության մասին շահագրգիռ կողմերի իրազեկվածության մակարդակը պարզելու նպատակով Հայաստանում իրականացվել են հետևյալ հարցումները:

3.1.1. Հարցաշար 1. արդարադատություն իրականացնող և իրավապահ մարմինների տեսակետները

Հարցաշարը լրացվել է դատախազների, տարբեր կոչումներ ունեցող ոստիկանների և իրավական ոլորտի մասնագետների կողմից: Գնահատվել են առցանց ոտնձգությունների և բռնարարքների մասին ներկայացված հաղորդումներին իրավապահ մարմինների արձագանքման օպերատիվության վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև բռնության զոհերի համար այնպիսի իրավական պաշտպանության միջոցների մատչելիությունը, ինչպիսիք են պաշտպանության և անհետաձգելի միջամտության որոշումները:

Արձագանքները ցույց են տվել, որ կանանց նկատմամբ թվային բռնության դեպքերի արդյունավետ բացահայտման, դրանցից պաշտպանության և դրանց դեմ քրեական հետապնդում հարուցելու համար հստակ սահմանված մեխանիզմներ չկան:



Մասնակիցների 78%-ը համաձայնել է, որ տեխնոլոգիաների զարգացման արագ տեմպերն առաջացնում են բռնության նոր տեսակներ, և որ օրենսդրությունը չի նախատեսում բռնությունների այդ տեսակներին համարժեք արձագանքելու գործիքներ և մեխանիզմներ: Հետաքրքիր է, որ թեև մասնակիցների 82%-ն է նշել թվային բռնությանը վերաբերող օրենսդրական շրջանակի հետագա ընդլայնման հրատապ կարևորության մասին, այնուամենայնիվ, միայն 43%-ն է նշել, որ կանանց նկատմամբ թվային բռնությունը պետք է հասցեագրվի որպես առանձին՝ գենդերի հիմքով բռնության տեսակ: Զարմանալիորեն, մասնակիցների 55%-ը նշել է, որ Հայաստանում ներկայիս/նախկին զուգընկերների միջև տարածված չեն այնպիսի

խախտումներ, ինչպիսիք են կին զուգընկերոջն ուղղված վրեժխնդրության նպատակով պոռնոգրաֆիան, կիբեռհետամտումը, կիբեռոտնձգությունը, և որ նրանք երբեք չեն հանդիպել նմանատիպ երևույթների: Մասնակիցների միայն 13%-ն է համաձայնել, որ կանանց նկատմամբ թվային բռնությունը բարդ խնդիր է, և որ այն պետք է հատուկ կերպ հասցեագրվի: Ռեսպոնդենտների 95%-ը նշել է օրենսդրության կատարելագործմանը զուգահեռ մասնագետների կրթության և հմտությունների զարգացման, մասնավորապես՝ միջազգային փոխանակման ծրագրերի և վարժանքների մեծ կարևորությունը, որոնք ուղղված են բարձրացնելու նրանց՝ թվային բռնության զոհերին հայտնաբերելու և պաշտպանելու կարողությունները:

3.1.2. Հարցաշար 2. բռնություն վերապրածների տեսակետները

Հարցման երկրորդ մասը բռնության այն զոհերին ուղղված հարցաշարն էր, որոնք դիմել էին տարբեր ՀԿ-ների և Կանանց աջակցման կենտրոնների՝ ընտանիքում բռնության կամ գենդերի հիմքով բռնության դեպքերի առնչությամբ աջակցություն ստանալու համար: Թիրախային խմբին հարց էր ուղղվել, թե արդյոք նրանք ենթարկվել են բռնության թվային հարթությունում, ինչպես նաև բռնության այլ ձևերի, արդյոք նրանք այդ դեպքերի առնչությամբ հաղորդում ներկայացրել են և ինչպիսի արդյունքներ են ունեցել: Հարցաշարը մշակված էր այնպես, որ հնարավոր լինի պարզել, թե արդյոք նրանք իրենց նկատմամբ գործադրված բռնության որևէ ձև կբնութագրեն որպես թվային:

Սույն հարցման արդյունքում պարզվել է, որ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը վերապրած անձինք սովորաբար, որպես իրենց փորձառության մաս, ենթարկվել են թվային բռնության:



Ի տարբերություն իրավապահների և արդարադատության ոլորտի մասնագետների 55%-ի այն համոզմունքի, որ Հայաստանում կանանց նկատմամբ թվային բռնությունը հազվադեպ երևույթ է, բռնություն վերապրածների և ՀԿ-ների աշխատողների 98%-ը նշել է թվային հարթությունում բռնության մեկ կամ մի քանի ձևեր, որոնք գործադրվել են նրանց և այն կանանց նկատմամբ, որոնց նրանք աջակցություն են ցուցաբերում: Այնուհետև, 2%-ը վստահ չէր, թե դա ինչ է եղել կամ ինչպես այն անվանել: Մինչդեռ կիբեռհետամտման ենթարկվել է 74%-ը, որը սահմանափակել է սոցիալական շփումները և վատացրել նրանց կյանքի որակը, 34%-ը նաև ենթարկվել է ֆինանսական խարդախության: Հարցմանը մասնակցած զոհերի 97%-ի դեպքում բռնություն գործադրող անձը եղել է նրանց նախկին զուգընկերը/ամուսինը, մինչդեռ միայն 2%-ի դեպքում բռնություն գործադրող անձը եղել է ծանոթությունների համար նախատեսված հավելվածից անհայտ անձ: Մասնակիցները չեն նշել Կանանց աջակցման կենտրոններից կամ թվային բռնության հարցերով ուղղակիորեն զբաղվող այլ կազմակերպություններից որևէ աջակցություն ստանալու մասին: Ռեսպոնդենտների 23%-ն է դեպքի առթիվ հաղորդում ներկայացրել ոստիկանություն, սակայն նրանցից ոչ մեկ արձագանք չի ստացել:

Նույն հարցաշարը լրացվել է կին բարձրաստիճան պաշտոնատար անձանց և հասարակական գործիչների կողմից՝ պարզելու համար, թե արդյոք նրանց սոցիալական շփումները և հասարակական գործունեությունը թիրախավորվել են թվային տիրույթում՝ նրանց ձայնը բացառելու, նվազեցնելու և լռեցնելու նպատակով: Անձնական հարցազրույցների միջոցով նրանք կիսվել են թվային հարձակումների առնչությամբ իրենց անձնական փորձառությամբ, և թե ինչպես են նրանք հաղթահարել այդ դժվարությունները:

Այդ մասնակիցների 78%-ը նշել է, որ իրենց հասարակական գործունեության, հատկապես գենդերային խտրականության պատճառով ենթարկվել են մշտական ատելության և հարձակումների: 98%-ը նշել է ամբողջ մասնագիտական գործունեության ընթացքում իրենց գենդերի պատճառով կիբեռհարձակման մեկ կամ ավելի տեսակների ենթարկվելու մասին: Թեև 68%-ը նշել է, որ գոնե մեկ անգամ մտածել է հասարակական կյանքից հեռանալու մասին, այնուամենայնիվ, 32%-ը նշել է, որ վիրավորված է եղել, սակայն նախընտրել է ընդդիմանալ դրան:

Պաշտոնյայի խոսնակը պատմել է ղեկավարի հետ գործուղման մեկնելու պատճառով մի ամբողջ շաբաթ թիրախավորվելու իր փորձառության մասին: Վերջինիս անձնական թվային ալբոմի լուսանկարները տարածվել էին առանց նրա համաձայնության, որտեղ նա հիշատակվում և ներկայացվում էր որպես ղեկավարի «հարսնացու»: Դա դեպրեսիվ ազդեցություն էր ունեցել, առաջացնելով խորը ամոթի զգացում առիթ տալով մտածելու առհասարակ սոցիալական ցանցերում իր ներկայությունը սահմանափակելու մասին: Նա դեպքի առթիվ հաղորդում չի ներկայացրել ոստիկանություն, քանի որ վստահ չի եղել, որ այն ունի բավարար մեխանիզմներ՝ իրեն պաշտպանելու համար: Թեև այդ դեպքից անցել է մի քանի տարի, սակայն դրա մասին հոդվածները դեռևս հասանելի են համացանցում:

Մեկ այլ հասարակական գործիչ նշել է, որ ստացել է դիփֆեյք տեխնոլոգիայի միջոցով գեներացված՝ սեռական բովանդակություն պարունակող տեսանյութի հրապարակման սպառնալիք, եթե շանտաժ անողներին չտա կոնկրետ չափի գումար: Բռնության զոհը նշել է, որ դիմել էր ընկերներին և հանրային հարթակներում ծառայություններ մատուցող մասնագետներին՝ ալիքն ու տեսանյութը փակելու խնդրանքով, սակայն ոստիկանություն դրա մասին

հաղորդում չի ներկայացրել: Նա նշել է, որ ունեցել է ամոթի զգացում, եղել է բարկացած և չի ցանկացել պատկերացնել, որ իր ընտանիքն ու գործընկերները կտեսնեն այդ տեսանյութը: Նա համացանցում իր գործունեությունը սահմանափակելու որոշում էր կայացրել:

3.1.3. Հարցաշար 3. աջակցություն ցուցաբերող անձանց տեսակետները

Երրորդ հարցաշարը մշակվել էր՝ գնահատելու համար Կանանց աջակցման կենտրոնների՝ թվային բռնության զոհերին արձագանքելու և ուղղորդելու կարողությունը՝ նրանց պաշտպանություն և աջակցություն ցուցաբերելու միջոցով, այդ թվում՝ գնահատելու համար նրանց իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև թվային տիրույթում կանանց նկատմամբ բռնությունը բացահայտելու տեխնոլոգիական հնարավորությունները: Դա ներառում էր արտակարգ իրավիճակների դեպքում օգնության թեժ գծերի, խորհրդատվական ծառայությունների, իրավաբանական օգնության և թվային տիրույթում բռնության զոհերի առանձնահատուկ մարտահրավերները հասցեագրելու համար նախատեսված ապաստարանների տրամադրումը:

Սույն հարցման արդյունքում վերհանվել են բռնության զոհերի հետ անմիջական կապ պահպանող՝ Կանանց աջակցման կենտրոնների լուրջ մտահոգություններն այն մասին, որ կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունները պետք է հասցեագրվեն:



Մասնակիցների 100%-ը կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունները համարել է հասցեագրման ենթակա խնդիր: Մասնակիցների 78%-ը նշել է մասնագիտացված կենտրոնների կողմից կրթական և իրազեկվածության մակարդակի բարձրացման համար

նախատեսված նյութեր ունենալու հրատապ անհրաժեշտության մասին, որոնք կօգնեն դրանք հայտնաբերել, պաշտպանել բռնության զոհերին և աջակցել նրանց վերականգնմանը: Մասնակիցների 85%-ը նշել է կիբեռհանցագործներին հետևելու և կասեցնելու համար տեխնոլոգիական սարքավորումների առկայության կարևորության մասին: Թեև մասնակիցների միայն 25%-ն է նշել թվային բռնության տարբեր տեսակները հատուկ կանոնակարգելու նպատակով օրենսդրությունը փոփոխելու կարևորության մասին, այնուամենայնիվ, մասնակիցների 51%-ը նշել է, որ գիտի նմանատիպ երևույթների գոյության մասին, սակայն չգիտի դրանց միջև տարբերությունը և դրանք միասին անվանել է կիբեռհանցագործություն:

3.1.4. Հարցման եզրակացությունները

Կոնկրետ հասարակության սոցիալ-մշակութային համատեքստը կարևոր գործոն է՝ գենդերի հիմքով բռնության առաջացումն ու իրավապահների արձագանքը հասկանալու համար: Կանանց նկատմամբ սոցիալական ընկալումներն ու նրանց ներկայացվածությունները, երբեմն իրավական շրջանակին զուգահեռ, սահմանում և ձևակերպում են բարոյականության ու արդարության սոցիալական ըմբռնումը և կարող են խեղաթյուրել կանանց փորձառության իրականությունը:

Հարցման արդյունքում պարզվել է, որ թվային հարթությունում կանանց նկատմամբ բռնությունը Հայաստանում արագ տեմպերով աճող խնդիր է, որը բավարար չափով ուսումնասիրված կամ հասցեագրված չէ: Իրավական շրջանակը և քրեական հետապնդման մեխանիզմներն ամբողջությամբ չեն կանոնակարգում թվային հարթությունում կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերն ու տեսակները: Կանայք նույնպես ամբողջությամբ չեն նույնացնում թվային բռնությունը որպես բռնություն, այդ իրավախախտումների մասին հաղորդումներ չեն ներկայացնում կամ չեն դիմում պաշտպանություն ստանալու և քրեական հետապնդում հարուցելու համար: Բացի դրանից, Կանանց աջակցման կենտրոնները ոչ միայն ամբողջությամբ իրազեկված չեն թվային բռնության մասին, այլև չունեն տեխնոլոգիաներ, որոնք կօգնեն հայտնաբերել այն: Ավելին, Կանանց աջակցման կենտրոնների և ոստիկանության միջև չկան համագործակցության հաստատված մեխանիզմներ՝ թվային բռնությունը հայտնաբերելու ու կանխելու, պաշտպանություն տրամադրելու և գործերի քրեական հետապնդումն ապահովելու համար:

3.2. Միջազգային իրավական շրջանակը

Հայաստանը «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան (ԿՆԽՎԿ) վավերացրել է 1993 թվականին, դրա Կամընտիր արձանագրությունը՝ 2006 թվականին, համարվում է Պեկինի գործողությունների հարթակի ստորագրող կողմ (1995 թվական), իսկ Ստամբուլի կոնվենցիան ստորագրել է 2018 թվականի հունվարին (թեև դա դեռևս վավերացված չէ): Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածով սահմանվում է, որ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է նաև վավերացված պայմանագրերի ուղղակի իրավական կիրառումը:

Թեև կանանց նկատմամբ բռնությունն ուղղակիորեն չի կարգավորվում ԿՆԽՎԿ-ով, այնուամենայնիվ, 1992 թվականից ի վեր ԿՆԽՎԿ կոմիտեն իր «Ընդհանուր առաջարկություններով» հստակեցրել է, որ գենդերի հիմքով բռնությունը խախտում է Կոնվենցիայի հատուկ դրույթները (ԿՆԽՎԿ, 1992թ., պարբերություն 6): «Թիվ 19 ընդհանուր առաջարկությունը թարմացնող՝ կանանց նկատմամբ գենդերի հիմքով բռնության մասին» թիվ 35 (2017) ընդհանուր առաջարկությամբ նշվում է, որ կանանց նկատմամբ բռնությունը «դրսևորվում է բազմաթիվ, փոխկապակցված և կրկնվող ձևերով, մի շարք միջավայրերում՝ մասնավորից մինչև հանրային, այդ թվում՝ տեխնոլոգիական միջավայրերում» (ԿՆԽՎԿ, 2017ա, պարբերություն 6): Գենդերի հիմքով բռնությունը տեղի է ունենում մարդկային փոխգործակցության բոլոր տարածքներում և ոլորտներում, լինի հանրային, թե մասնավոր, այդ թվում՝ տեխնոլոգիական միջավայրերի միջոցով, ինչպիսիք են առցանց և այլ թվային միջավայրերում տեղի ունեցող բռնության ժամանակակից ձևերը (ԿՆԽՎԿ, 2017ա, պարբերություն 20): ԿՆԽՎԿ կոմիտեն առաջարկում է մասնակից պետություններին կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունների վերաբերյալ տվյալներ հավաքել (ԿՆԽՎԿ, 2017ա, պարբերություն 34(բ)) և հորդորում է մասնավոր հատվածին, այդ թվում՝ բիզնեսներին և անդրազգային կորպորացիաներին ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ իրենց ծառայություններում ու հարթակներում կանանց նկատմամբ բռնությունը վերացնելու համար (ԿՆԽՎԿ, 2017ա, պարբերություն 30(դ)): «Կանանց և աղջիկների կրթության իրավունքի մասին» թիվ 36 (2017) ընդհանուր առաջարկությունն ուղղակիորեն վերաբերում է կիբեռբուլինգին և պահանջում է պետություններից ընդունել օրենսդրություն, որով կսահմանվեն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ գործադրվող ոտնձգությունը, կանանց ու աղջիկների նկատմամբ առցանց ոտնձգություններն իրենց բոլոր ձևերով, և կնախատեսվի դրանց համար պատիժ (ԿՆԽՎԿ, 2017բ, պարբերություններ 70-72):

3.2.1. ԿՆԽՎԿ-ի՝ Հայաստանի 7-րդ պարբերական զեկույցը

ԿՆԽՎԿ-ի՝ Հայաստանի 7-րդ պարբերական զեկույցում (ԿՆԽՎԿ, 2022ա) նշվել է կանանց և աղջիկների կողմից իրենց իրավունքների իրացումը սահմանափակող ավանդական և հայրիշխանական վերաբերմունքի արմատացման մասին: Կոմիտեն առաջարկել է արագացնել

ինչպես իրավահավասարության վերաբերյալ առաջարկվող օրենքի, այնպես էլ ժամանակավոր հատուկ միջոցների ընդունումը՝ կանանց և տղամարդկանց միջև էական հավասարության հասնելու գործընթացն արագացնելու համար: Խտրական կարծրատիպերի համատեքստում ԿՆԽՎԿ կոմիտեն առաջարկել է մշակել և իրականացնել համապարփակ ռազմավարություն, այդ թվում՝ առցանց տիրույթի համար՝ ուղղված համայնքի ղեկավար հանդիսացող ուսուցիչներին, աղջիկներին, տղաներին, կանանց և տղամարդկանց՝ ընտանիքում և հասարակության մեջ կանանց և տղամարդկանց դերերի ու պարտականությունների վերաբերյալ խտրական կարծրատիպերը վերացնելու համար:

- Կանանց նկատմամբ բռնությունից պաշտպանության համատեքստում Կոմիտեն մտահոգությամբ նշել է գենդերի հիմքով բռնության բոլոր ձևերը քրեականացնող իրավական դրույթների բացակայության, ինչպես նաև խտրականության փոխհատական ձևերի ենթարկվող անձանց ոչ պատշաճ պաշտպանության մասին: Կանանց նկատմամբ գենդերի հիմքով բռնության բոլոր ձևերը կանոնակարգելու, արդարադատության հասանելիություն ապահովելու և արդյունավետ պաշտպանություն տրամադրելու նպատակով առաջարկվել է օրենսդրական շրջանակում կատարել փոփոխություններ: Շեշտադրվել է նաև առանց ճնշումների, խարանման կամ կրկնակի զոհացման կանանց՝ հաղորդումներ ներկայացնելու հնարավորություն տալու անհրաժեշտությունը: Զեկույցում առաջարկվում է նաև միջոցներ ձեռնարկել ատելության խոսքի, ինչպես նաև քաղաքականությամբ զբաղվող կանանց նկատմամբ խտրականության և ատելության խոսքի դեմ պայքարի առնչությամբ: Առաջարկվող լրացուցիչ միջոցներն են՝ դպրոցներում, Ազգային ժողովում և լայն հասարակության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացման և կրթական արշավների կազմակերպումը:

- Կոմիտեն առաջարկել է վավերացնել Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա):

3.2.2. Եվրոպայի խորհուրդը. Ստամբուլի կոնվենցիան

Ստամբուլի կոնվենցիան կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում կատարման համար պարտադիր ամենամանրամասն շրջանակն է: Դրանով կանանց նկատմամբ բռնությունը սահմանվում է որպես մարդու իրավունքների ակնհայտ խախտում և կանանց նկատմամբ խտրականության դրսևորում: Ստամբուլի կոնվենցիան տալիս է առավել համապարփակ սահմանում, որով հստակեցվում է, որ այդ բռնությունը ներառում է կանանց հասցվող՝ գենդերի հիմքով վնասի կամ տառապանքի բոլոր ձևերը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնասը: Այն ներառում է գործողություններ, սպառնալիքներ, հարկադրանք կամ ազատությունից կամայական զրկում՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք տեղի են ունենում հանրային, թե մասնավոր միջավայրում: Ավելին, Կոնվենցիայի գործողության ոլորտն ընդլայնվում է՝ ներառելով ընտանիքում բռնությունը, որը 3(բ) հոդվածով սահմանվում է որպես «ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնի բոլոր արարքները», որոնք տեղի են ունենում ընտանեկան կամ կենցաղային միջավայրում: Այն ընդգծում է, որ այդ բռնությունը կարող է տեղի ունենալ ներկայիս կամ նախկին

ամուսինների կամ զուգընկերների միջև՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք համատեղ բնակվում են, թե նախկինում բնակվել են: Բացի դրանից, Կոնվենցիան ընդգծում է ընտանիքում բռնությունն առաջին հերթին որպես գենդերային երևույթ ընդունելու կարևորությունը՝ շեշտադրելով կանանց նկատմամբ դրա անհամաչափ ազդեցությունը (2-րդ հոդված): Կոնվենցիան կառուցված է չորս հենասյուների շուրջ՝ կանխարգելում, պաշտպանություն, քրեական հետապնդում և համակարգված քաղաքականություն:

Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության համատեքստում Ստամբուլի կոնվենցիայի դրույթները լրացվում են Կիբեռհանցագործության մասին Բուդապեշտի կոնվենցիայով (ԵԽՊԾ թիվ 185) (Բուդապեշտի կոնվենցիա), ինչպես նաև Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիայով (ԵԽՊԾ թիվ 201) (Լանզարոտեի կոնվենցիա):

3.2.3. ԳՐԵՎԻՈ-ի թիվ 1ընդհանուր առաջարկությունը

Նոր ի հայտ եկած թվային ոլորտում համացանցի և տեխնոլոգիաների հետ կապված վնասաբեր գործողությունների արագ տարածման պատճառով ԳՐԵՎԻՈ-ն ընդունել է, որ թվային ոլորտում կանանց նկատմամբ բռնության առնչությամբ առկա է աճող գլոբալ մտահոգություն, և իր 21-րդ լիագումար նիստի ժամանակ որոշել է պատրաստել կանանց նկատմամբ բռնության թվային հայեցակետի առնչությամբ Ստամբուլի կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ «Ընդհանուր առաջարկություն»: Ստամբուլի կոնվենցիայի 69-րդ հոդվածի համաձայն՝ ԳՐԵՎԻՈ-ն ունի առաջարկություններ ներկայացնելու իրավունք:

Ինչպես նշված է Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցում, «Ընդհանուր առաջարկությունները» պետք է Կոնվենցիայի հոդվածներին կամ դրանով շոշափվող թեմաներին անդրադառնալիս բոլոր շահագրգիռ կողմերի համար ունենան միատեսակ մեկնաբանություն: Թեև «Ընդհանուր առաջարկությունները» կատարման համար պարտադիր չեն, այնուամենայնիվ, դրանք՝ որպես կողմերի համար կարևոր հղման կետ, ունեն առանցքային դերակատարություն՝ նպաստելով Կոնվենցիայով շոշափվող թեմաների առավել խոր ընկալմանը և տրամադրելով արդյունավետ իրականացման համար հստակ ուղեցույցներ: Դրանք մշակված են այնպես, որպեսզի կիրառվեն հետագա մշտադիտարկման իրականացման գործընթացում:

Թիվ 1 ընդհանուր առաջարկությամբ փորձ է կատարվում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) խոսույթը համապատասխանեցնել կանանց նկատմամբ գենդերի հիմքով բռնության պատմույթին՝ թվային ոլորտում կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դրսևորումները հստակորեն դասելով Ստամբուլի կոնվենցիայով կանոնակարգվող՝ կանանց նկատմամբ գենդերի հիմքով բռնության դրսևորումների շարքին: ԳՐԵՎԻՈ-Ն շեշտադրել է նոր ձևավորված այս ոլորտում բռնության երևույթն առանձին սահմանելու կարևորությունը: Այն հատկապես շեշտադրում է առցանց սեռական ոտնձգությունների բոլոր ձևերը, առցանց և տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հետամտումը և հոգեբանական բռնության թվային հարթությունները: «Ընդհանուր առաջարկությունն» ընդունվել է 2021 թվականի հոկտեմբերի 20-ին:

3.2.4. Այլ համապատասխան ստանդարտները

Այլ համապատասխան ստանդարտներն են «Սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված CM/REC (2019) 1 առաջարկությունը, որն ունի սեքսիստական ատելության խոսքին վերաբերող առցանց բաժին, ինչպես նաև 2022 թվականի մայիսի 20-ին ընդունված՝ «Ատելության խոսքի դեմ պայքարի մասին» CM/Rec (2022) 16 առաջարկությունը:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) հրապարակել է «Կիբեռխտրականությունը և առցանց ատելությունը վերացնելու մասին» 2098 (2017) առաջարկություն և երկու համապատասխան բանաձևեր, առաջինը՝ «Կիբեռխտրականությունը և առցանց ատելությունը վերացնելու մասին» 2144 (2017) բանաձևը և երկրորդը՝ «Հանրային վայրերում կանանց նկատմամբ սեռական բռնությանը և ոտնձգությանը վերջ դնելու մասին» 2177 (2017) Խորհրդարանական վեհաժողովի բանաձևը:

Ի եզրափակումն, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովը հրապարակել է «Ատելության դեմ պայքարի մասին» թիվ 15 ընդհանուր քաղաքականության առաջարկությունը, որով կանոնակարգվում է նաև թվային ոլորտում ատելության խոսքը:

3.3. Սահմանումները և եզրույթները

Կանանց նկատմամբ բռնության ձևերի դեմ պայքարի գործընթացում հասցեագրման ենթակա ամենակարևոր հարցերից են գործածվող սահմանումներն ու եզրույթները: Ստանդարտացված և հանրահայտ եզրույթների բացակայության պատճառով բռնության զոհերը դժվարանում են պատշաճ կերպով արտահայտել իրենց անձնական փորձառությունը, այն ստեղծում է շահագրգիռ կողմերի կողմից այդ բռնարարքների ընկալման, չափման և գնահատման հարցում տարբերություններ և ազդում է կողմերի՝ այդ բռնությանն արդյունավետորեն արձագանքելու կարողության վրա:

Թե՛ միջազգային, թե՛ տեղական մակարդակում ՏՀՏ-ին, մասնակցությանը, հասանելիության իրավունքներին և առցանց անվտանգությանը վերաբերող քննարկումներն ու իրավական շրջանակները հաճախ զուրկ են գենդերահիրազեկ տեսանկյունից և առցանց բռնության առումով կանանց խոցելիության մասին պատկերացումից՝ չնայած դրա տարածվածությանը: ԳՐԵՎԻՈ-ն նկատել է, որ կանանց իրավունքներին առնչվող միջազգային և եվրոպական իրավական նորմերը պատշաճ կերպով չեն հասցեագրում կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության թվային հարթությունները: Այդ վրիպումը կանոնակարգերում առաջացնում է նկատելի բաց (ԳՐԵՎԻՈ, 2021թ.):

Թվային բռնությունը կարող է ներառել տեխնոլոգիաների միջոցով հասցվող կամ թվային վնասի՝ հասարակության լայն շերտերին ծանոթ և անծանոթ տեսակները, ինչպես նաև ապագայում հայտնագործվելիք կամ ստեղծվելիք տեսակները: Տեխնոլոգիաների արագ

տարածումը, ինչպես նաև տեխնոլոգիաների հասանելիության դյուրացումը վկայում են այն մասին, որ ի հայտ կգան նոր տեսակի վնասներ ու տեխնոլոգիաներ, որոնք կզարգանան, ձեռնարկված օրենսդրական ու քաղաքականության գործողություններին զուգահեռ, և, ամենայն հավանականությամբ, կզարգանան առավել արագ, քան կձեռնարկվեն այդ գործողությունները: Սա հատկապես արդիական է գեներատիվ արհեստական բանականության առկայության դեպքում (Չաուդհուրի, 2023թ.): Արդյունքում, շատ դժվար է սպառիչ կերպով սահմանել թե՛ վնասի տեսակները, թե՛ տեխնոլոգիաները: Հետևաբար, քաղաքականություն մշակողները և օրենսդիրները պետք է ապահովեն ընդհանուր սահմանումների առավել լայն գործածում՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության թվային հարթությունը սահմանելու համար, որպեսզի այդ սահմանման մեջ ընդգրկվեն նաև ապագայում ստեղծվելիք տեխնոլոգիաներն ու ձևերը:

Սույն զեկույցում գործածված սահմանումները համապատասխանում են «Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության մասին» ԳՐԵՎԻՈ-ի թիվ 1 ընդհանուր առաջարկության մեջ գործածված սահմանումներին:

3.3.1. Կանանց նկատմամբ թվային բռնության ձևերը

Կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը, որը հաճախ կոչվում է «առցանց բռնություն» կամ «կիբեռբռնություն», ներառում է տեխնոլոգիաների և առցանց հարթակների տարբեր ձևերի կիրառմամբ թվային ոլորտում կանանց նկատմամբ իրականացվող մի շարք վնասաբեր վարքագծեր և գործողություններ: Թվային հարթությունում կանանց նկատմամբ բռնության հասկացությունը ներառում է տեխնոլոգիաների կիրառմամբ կանանց և աղջիկների նկատմամբ իրականացվող վնասաբեր վարքագծի թե՛ առցանց (online) հայեցակետերը (համացանցում կատարված գործողությունները և հասանելի տվյալները, այդ թվում՝ հանրայնորեն հասանելի ցանցի, ինչպես նաև թաքնված ցանցի համացանցային միջնորդները), թե՛ անցանց (offline) հայեցակետերը (տեխնոլոգիական և հաղորդակցության սարքավորումների, այդ թվում՝ ծրագրաշարի և ծրագրային ապահովման կիրառմամբ իրականացվող գործողությունները): «Համացանցային միջնորդները» համացանցում ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև փոխգործակցությունը դյուրացնող կազմակերպություններ են՝ առաջարկելով և իրականացնելով մի շարք գործառույթներ ու ծառայություններ, ինչպես նաև համացանցային ծառայություններ մատուցողները (ՀԾՄ-ներ), որոնման համակարգերն ու սոցիալական մեդիայի հարթակները: Տեխնոլոգիական գործիքները, որոնք իրավախախտները կարող են օգտագործել բռնության զոհերին հետամտելու, նրանց նկատմամբ ոտնձգություն կատարելու, նրանց հետևելու, վերահսկելու նպատակով, սմարթֆոնները, տեսախցիկները և մյուս ձայնագրող սարքավորումները, գլոբալ դիրքորոշման համակարգերը (GPS) կամ արբանյակային նավիգացիոն համակարգերը, համացանցին միացված մյուս սարքերը, ինչպիսիք են խելացի ժամացույցները, ֆիթնես հետագծիչները և խելացի տնային սարքերը, ինչպես նաև ծրագրային ապահովումները, այդ թվում՝ լրտեսող ծրագրերը կամ այլ բջջային հավելվածները, որոնք կարող են նպաստել բռնության գործադրմանը: (ԳՐԵՎԻՈ, 2021թ.)

1. Առցանց ոտնձգությունը և կիբեռբուլինգը

Ստամբուլի կոնվենցիայի 40-րդ հոդվածի համաձայն՝ սեռական ոտնձգությունը «սեռական բնույթի անցանկալի բանավոր, ոչ բանավոր կամ ֆիզիկական վարքագծի ցանկացած ձև է, որը նպատակ ունի ոտնահարել կամ ոտնահարում է անձի արժանապատվությունը հատկապես ահաբեկող, թշնամական, նվաստացնող, ստորացնող կամ վիրավորական միջավայր ստեղծելու միջոցով: Թիվ 1 ընդհանուր առաջարկությամբ սահմանվում են սեռական ոտնձգության կոնկրետ հինգ ձև՝ 1) պատկերների կամ տեսանյութերի՝ առանց համաձայնության տարածումը, 2) ինտիմ պատկերների կամ տեսանյութերի՝ առանց համաձայնության նկարահանումը, արտադրությունը կամ գնումը, 3) շահագործումը, հարկադրանքն ու սպառնալիքները, 4) սեռականացված բուլինգը և 5) կիբեռֆլեշինգը:

Տեխնոլոգիաների տարածման և ինտերնետ կապի հասանելիության պայմաններում առցանց ոտնձգություններն ու կիբեռբուլինգը, այդ թվում՝ վիրավորական մեկնաբանությունները, նվաստացնող հաղորդագրություններն ու սպառնալիքները դարձել են նոր իրականություն նաև Հայաստանում: Սոցիալական մեդիայի հարթակները, քննարկումների համար ֆորումները և հաղորդագրությունների փոխանակման հավելվածներն այն սովորական տիրույթներն են, որտեղ տեղի են ունենում այդ ոտնձգությունները: Դրանք կարող են լինել վիրավորական հաղորդագրությունների, սպառնալիքների, առանց համաձայնության անձնական տվյալների տարածման և բռնության զոհերի նկատմամբ ոտնձգություն կատարելու համար կեղծ պրոֆիլների ստեղծման միջոցով: Առցանց բռնարարքների և սպառնալիքների առումով հատկապես խոցելի են առցանց գործունեություն իրականացնող կանայք, այդ թվում՝ լրագրողները, ակտիվիստները և հասարակական գործիչները: Դրանք կարող են լինել կանանց ձայնը լռեցնելուն և հանրային դիսկուրսին մասնակցության դեմ ուղղված կնատյաց մեկնաբանություններ, բռնության սպառնալիքներ և ահաբեկումներ:

2. Վրեժխնդրության նպատակով պոռնագրաֆիան և պատկերների՝ առանց համաձայնության տարածումը

Ինտիմ պատկերների՝ առանց համաձայնության տարածումը, որը հայտնի է որպես վրեժխնդրության նպատակով պոռնոգրաֆիա, կանանց նկատմամբ թվային բռնության ձև է: Այս իրավախախտման ազդեցությունը սրվում է Հայաստանում մշակութային առանձնահատկության պատճառով, քանի որ այն բռնության զոհերին դնում է ամոթալի դրության մեջ, որը կարող է բարոյապես վնասել նրանց և հանգեցնել հասարակության կողմից կրկնազոհացման: Բռնություն գործադրող անձինք կիրառում են այս մարտավարությունը՝ կանանց ամաչեցնելու, վերահսկելու կամ շանտաժի ենթարկելու համար, ինչը հանգեցնում է ծանր հուզական անհանգստությունների և վնասում է նրանց հեղինակությանն ընտանիքում, աշխատավայրում կամ մասնագիտական զարգացման ընթացքում: Պատկերների՝ առանց համաձայնության տարածումը կարող է կիրառվել նաև շանտաժի և ահաբեկման համար՝ ինտիմ բնույթի բովանդակությունը չբացահայտելու դիմաց գումար կամ ինչ-որ գործողություն պահանջելու միջոցով:

Որոշ դեպքերում կանայք նշում են մշտական մանիպուլյացիաների մասին, երբ իրենցից պահանջում են ավելի շատ մերկ լուսանկարներ՝ դրանով իսկ վերահսկելով նրանց՝ էլ ավելի շատ նյութ ունենալու միջոցով: Շատ կարևոր է հասկանալ զարգացող տեխնոլոգիաների և գեներատիվ արհեստական բանականության գործիքների տարածումը, որոնք թույլ են տալիս ստեղծել դիփֆեյկեր և մոնտաժել մարմինները, դեմքերը պատկերող կամ այլ բովանդակության ցանկացած լուսանկարչական կամ տեսաձայնագրված բովանդակություն: Այս տեսակի տեխնոլոգիաները հասանելի են մատչելի գներով, որոնք կարող են օգտագործվել բաց և թաքնված ցանցերում պոռնոգրաֆիկ բովանդակության արտադրման և առցանց հոսքային փոխանցման համար: Թեև սա կարող է որոշ դեպքերում օգտագործվել նաև տղամարդկանց և տղաներին թիրախավորելու համար, այնուամենայնիվ, ամբողջ աշխարհում ինտիմ պատկերների՝ առանց համաձայնության տարածումից տուժած անձանց մոտ 90%-ը կանայք են (Կիբեռիրավունքներ, 2024թ.): Արդյունքում կանայք նաև թիրախավորվում են բռնության զոհերին մեղադրող պատմություններով այն հասարակությունում, որտեղ նրանք երբեմն խարանվում և քննադատվում են:

3. Հետամտումը և հսկողությունը

Ստամբուլի կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն՝ հետամտում նշանակում է «դիտավորությամբ պարբերաբար մեկ այլ անձի դեմ սպառնալից գործողություններ կատարելը, որն այդ անձի մեջ վախ է առաջացնում իր անվտանգության համար»:

Կանանց հետամտումը նոր երևույթ չէ Հայաստանում: Անցանց հետամտումը հաճախ սխալմամբ դիտվում է որպես «հոգատարության» կամ «առնականության» դրսևորում, հատկապես գյուղերում և փոքր քաղաքներում: Տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հետամտումն այս խնդրի նոր դրսևորումն է, որը հնարավորություն է տալիս հետամտել՝ անկախ գտնվելու վայրից: Հայաստանում կանայք կարող են ենթարկվել առցանց հետամտման և մշտադիտարկման, որտեղ բռնություն գործադրող անձն օգտագործում է տեխնոլոգիաներ, որպեսզի հետևի նրանց տեղաշարժին, մշտադիտարկի նրանց առցանց գործունեությունը և ներխուժի նրանց անձնական կյանք: Այն շարունակվում է, նույնիսկ եթե բռնության զոհը փոխի իր բնակության վայրը (*Վոլոդինան ընդդեմ Ռուսաստանի գործ* [Volodina v. Russia], Մարդու իրավունքների Եվրոպական դատարան (ՄԻԵԴ)): Սա կարող է հանգեցնել վախի, անհանգստության և անձնական տվյալների նկատմամբ վերահսկողության կորստի: Թվային գործիքներն ու տեխնոլոգիաները բավականին զարգացած են և շատ մատչելի, ուստի դրանք հեշտությամբ կարող են օգտագործվել հետամտման և հսկողության համար: Բռնություն գործադրող անձինք կարող են օգտագործել GPS հետևող հավելվածներ, լրտեսող ծրագրեր կամ սոցիալական ցանցեր՝ կանանց տեղաշարժումներն ու գործունեությունը մշտադիտարկելու համար՝ հանգեցնելով վախի և անապահովության զգացումի: Այդ մեխանիզմները բավականաչափ ուսումնասիրված չեն, ուստի բռնության զոհի համար դժվար է բացահայտել, հայտնաբերել և անջատել տեխնոլոգիան:

4. Առցանց սեռական շահագործումը

Կանանց կարող են ստիպել կիսվել մերկությունը երևացնող բովանդակությամբ, որն այնուհետև օգտագործվում է շանտաժի կամ շահագործման համար: Խոցելի կանայք, օրինակ՝ ֆինանսական դժվարությունների առջև կանգնած կանայք, հատկապես գտնվում են ռիսկի տակ: Կանայք կարող են ենթարկվել առցանց սեռական ոտնձգությունների և շահագործման, այդ թվում՝ սեռական բնույթի անցանկալի վարքագծի, սեռական ծառայություններ մատուցելու խնդրանքների և սեռական ծառայությունների մատուցումը կազմակերպելու միջոցով: Սա կարող է տեղի ունենալ տարբեր առցանց տիրույթներում, այդ թվում՝ սոցիալական ցանցերում, ծանոթությունների համար նախատեսված հավելվածներում և առցանց խաղերի հարթակներում: Սոցիալական հաղորդագրությունների փոխանակման հավելվածները նույնպես շատ տարածված են: Թեև դրանք կարող են առաջին շփման ժամանակ մտերմություն ապահովել, այնուամենայնիվ, հաղորդագրություններն ու պատկերները կարող են հեշտությամբ տարածվել և հաճախ հավաքվել ավելի մեծ խմբերի միջոցով: Այս ոլորտում սոցիալական ճարտարագիտությունը բավականին բարդ է, և կանայք սովորաբար թիրախավորվում են իրենց սոցիալական մեդիայի հարթակներում կատարած հատուկ գրառումների միջոցով: Դրանք կարող են օգտագործվել՝ բացահայտելու համար այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են միայնությունը կամ ծանր ֆինանսական և հոգեբանական իրավիճակները, որոնք նրանց խոցելի են դարձնում բռնություն գործադրող անձանց կողմից արդյունավետ թիրախավորման համար:

5. Առցանց ժամադրության ժամանակ բռնությունը

Ծանոթությունների համար նախատեսված հավելվածներն ու կայքերը կարող են պարարտ հող ստեղծել կանանց նկատմամբ թվային բռնության, այդ թվում՝ ոտնձգությունների, վիրավորական հաղորդագրությունների և որոշ դեպքերում առցանց ժամադրությունների հետևանքով տեղի ունեցող ֆիզիկական բռնության համար՝ այն դեպքում, երբ անձինք անձամբ են հանդիպում: Ծանոթությունների համար նախատեսված հավելվածները սկսում են էլ ավելի տարածում գտնել Հայաստանում, որոնց միջոցով ծանոթություններ են հաստատվում ոչ միայն Հայաստանում, այլև օտարերկրա պետություններում, ինչը կարող է դժվարացնել հանցագործության հետագծելիությունը: Աշխարհագրքերը միշտ չէ, որ հնարավոր է նույնականացնել, ինչն էլ ավելի է դժվարացնում թվային հետքի հետագծելիությունը և հանցագործներին բռնելը:

6. Առցանց բռնարարքն ընտանիքում բռնության համատեքստում

Շատ ժամանակ բռնացող զուգընկերներն իրենց վերահսկողությունն ու բռնարարքն իրականացնում են թվային տիրույթում: Նրանք կարող են մշտադիտարկել կնոջ առցանց հաղորդակցությունները, մանիպուլացնել նրան տեքստի կամ սոցիալական մեդիայի միջոցով կամ

օգտագործել տեխնոլոգիաներ՝ վերահսկողություն և ահաբեկում գործադրելու համար: Այս առցանց վարքագիծը մշտական է և մանիպուլացնում է բռնության զոհերին երկար ժամանակ: Բռնության զոհերն ի վիճակի չեն նորմալ կյանք վարելու և ազատ շփվելու:

7. Կիբեռշորթումը և ֆինանսական շահագործումը

Կանայք նույնպես կարող են լինել կիբեռշորթման զոհեր, որտեղ բռնություն գործադրող անձինք ամոթալի կամ հեղինակությունը վարկաբեկող առցանց գործողությունները բացահայտելու սպառնալիքով պահանջում են գումար կամ անձնական տվյալներ: Ֆինանսական շահագործումը կարող է ներառել նաև բանկային հաշիվների կոտրումը՝ կիբեռվիրուսների կամ սոցիալական ճարտարագիտության միջոցով:

8. Հոգեբանական բռնության թվային հարթությունը

Ստամբուլի կոնվենցիայի 33-րդ հոդվածի համաձայն՝ հոգեբանական բռնություն նշանակում է «դիտավորյալ գործողություններ, որոնք լրջորեն խաթարում են անձի հոգեբանական ամբողջականությունը հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով»: Թվային ոլորտում կանանց նկատմամբ իրականացվող բռնության բոլոր ձևերն ունեն հոգեբանական ազդեցություն և կարող են ընկնել այդ սահմանման ներքո: Առցանց հոգեբանական բռնություն կարող է նաև դրսևորվել բռնության զոհի ընտանիքին սպառնալու, վիրավորելու, ամաչեցնելու և զրպարտելու ձևերով: Ինքնասպանության կամ ինքնավնասման դրդելը հատուկ առցանց վարքագիծ է: Առցանց բռնության ձևերի մեծ մասը սրվում է ամբոխային մտածելակերպի և անանունության մեխանիզմների պատճառով:

Ուստի, կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը ներառում է Ստամբուլի կոնվենցիայի 3ա հոդվածով սահմանված՝ կանանց նկատմամբ բռնության սահմանման ներքո ընկնող մի շարք վարքագծեր: 3ա հոդվածով տրված այդ սահմանումը ներառում է պատկերների կամ տեսանյութերի՝ առանց համաձայնության տարածումը, հարկադրանքը և սպառնալիքները, այդ թվում՝ բռնաբարության սպառնալիքները, սեռականացված բուլինգը և ահաբեկման մյուս ձևերը, առցանց սեռական ոտնձգությունը, անձի նմանակումը, առցանց հետամտումը կամ Իրերի համացանցի (IoT) միջոցով հետամտումը, ինչպես նաև կանանց ու աղջիկների նկատմամբ թվային միջոցներով հասցված հոգեբանական բռնությունը և տնտեսական վնասը: (ԳՐԵՎԻՈ, 2021թ.)

3.4 Հայաստանի իրավական և գործնական իրավիճակի վերլուծությունը

Սույն բաժնում ուսումնասիրվում են այն բացերն ու մարտահրավերները, որոնց Հայաստանը բախվում է կանանց նկատմամբ բռնության թվային հարթություններին արձագանքելու ժամանակ՝ օգտագործելով Ստամբուլի կոնվենցիայի չորս հենասյուների շրջանակը՝ կանխարգելում, պաշտպանություն, քրեական հետապնդում և համակարգված քաղաքականություն:

Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության ճանաչման և կանխարգելման առաջին քայլն անհրաժեշտ օրենսդրական դրույթների առկայությունն ապահովելն է: Դա պետք է ուղեկցվի այլ միջոցներով՝ ապահովելու համար դրանց իրականացումը, այդ թվում՝ կարողությունների զարգացումը և իրազեկվածության մակարդակի բարձրացումը համապատասխան դերակատարների և ընդհանրապես բնակչության շրջանում:

Ըստ էության, օրենքով պետք է նախատեսվեն կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը կարգավորող դրույթներ, որոնք պետք է գործողության մեջ դրվեն՝ ապահովելու համար դրա պատշաճ կերպով կանխարգելումը, դրանից պաշտպանությունը և դրա քրեական հետապնդումը: Ավելին, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար գենդերային կարծրատիպերի վերացումը, գենդերային հավասարության խթանումը, ինչպես նաև կանանց ու տղամարդկանց, աղջիկներին ու տղաներին ուղղված իրազեկվածության մակարդակի բարձրացման արշավների կազմակերպումը՝ թվային ոլորտում կանանց և աղջիկների նկատմամբ բռնության տարբեր ձևերի, ինչպես նաև պաշտպանություն և աջակցություն ստանալու աղբյուրների ճանաչումը և դրանց վերաբերյալ իրազեկվածությունն ապահովելու համար: Մասնագետները պետք է անցնեն ուսուցում, իսկ կրթական ծրագրերում պետք է ներառվեն թվային գրագիտության վերաբերյալ դասեր: Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ընկերությունները պետք է նույնպես իրենց դերակատարությունն ունենան և գործադրեն ակտիվ ջանքեր՝ իրենց պրոդուկտներում գենդերային կանխակալությունը բացառելու համար:

3.4.1. Հայաստանի իրավական շրջանակը

Ստորև բերված վերլուծության նպատակն է ուսումնասիրել, թե արդյոք գործող օրենսդրությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին և առաջարկություններին, ինչպես օրինակ՝ ԳՐԵՎԻՈ-ի կողմից տրված առաջարկությունները, որը քաղաքականություն մշակողներին հնարավորություն կընձեռի վերհանել բացերն ու թերությունները և մշակել թվային տիրույթում կանանց իրավական պաշտպանությունն ամրապնդելու ռազմավարություններ: ԿՆԽՎԿ կոմիտեի տվյալների համաձայն՝ գենդերային կարծրատիպերի վերագրումը Հայաստանում շարունակում է մնալ կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման հիմնական խոչընդոտը և գենդերի հիմքով բռնության պատճառը (ԿՆԽՎԿ, 2022ա):

Հայաստանը դեռևս համապատասխանեցնում է իր օրենսդրությունն ինչպես կանխարգելման և պաշտպանության, այնպես էլ հաշվետվողականության մեխանիզմների

տեսանկյունից կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերը համապարփակ և բավարար չափով հասցեագրելու համար:

Գործող քրեական իրավունքով միայն մասամբ են հասցեագրված գենդերի հիմքով բռնության առանձնահատկությունները: Ինչ վերաբերում է արդեն ընդունված օրենքներին, այդ թվում՝ Բուդապեշտի կոնվենցիայի (ԵԽՊԾ թիվ 185) վավերացումից հետո, դեռևս ամբողջացված չեն բոլոր անհրաժեշտ գործիքակազմերը, իրավական մեխանիզմները՝ թվային հարթությունում կանանց նկատմամբ խախտումներն ու վնասաբեր վարքագիծը սահմանելու համար:

3.4.2. Առցանց սեռական ոտնձգությունը

2020 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը բավարար չափով չէր հասցեագրում թվային հարթությունում սեռական ոտնձգության դեպքերը (Եվրոպայի խորհուրդ, 2021բ): Հայաստանի Հանրապետության «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքով սեռական ոտնձգությունը 3-րդ հոդվածի (21)-րդ կետում և 6-րդ հոդվածում (որով արգելվում է գենդերային խտրականությունը) սահմանվում է որպես գենդերային խտրականության ձև: Խտրականությունը քրեականացված է Քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածով, սակայն գործնականում դա չի կիրառվում, և դրա համար որևէ պատիժ նախատեսված չէ ոչ քաղաքացիական, ոչ քրեական օրենսդրությամբ: Ավելին, Հայաստանը դեռևս պետք է ընդունի խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենք, որն ամենայն հավանականությամբ կներառի սեռական ոտնձգության արգելումը՝ որպես խտրականության ձև:

3.4.3. Առցանց և տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հետամտումը

Հայաստանը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքն ընդունել է 2017 թվականին: Վերջինս թվային բռնությունը կոնկրետ չի սահմանում որպես կանանց իրավունքների խախտումների առանձին դրսևորում, ոչ էլ թվային տարածքը՝ որպես նոր տիրույթ, որտեղ կանայք և աղջիկները հատկապես թիրախավորվում են իրենց գենդերի պատճառով:

Մինչև 2024 թվականը հետամտումը կոնկրետ հասցեագրված չէր քրեական իրավունքի դրույթներով: Մինչ հետամտումը սահմանելը՝ որոշ ընդհանուր բնույթի հանցանքներ կանոնակարգող դրույթները, ինչպիսիք են՝ ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելը (119-րդ հոդված), շորթումը (182-րդ հոդված) կամ սպառնալիքը (137-րդ հոդված), ինչ-որ չափով թիրախավորում էին հետամտման հասկացության ներքո սահմանվող վարքագծի որոշակի տարրերը: Այնուամենայնիվ, դրանք չէին հասցեագրում այդ հանցագործության հատուկ բնույթը: Ավելին, քրեական իրավունքի շրջանակներում հետապնդվող

գործերում ուղղակի ֆիզիկական վնասը հիմնականում եղել է քննության առարկա, իսկ հետամտումը պարզապես կապված է եղել ֆիզիկական բռնարարքի հետ:

Հաճախ թվային հետամտման դեպքերի քննության համար ստանդարտ քննության մեթոդները բավարար չեն: Հետամտումը կազմող շարունակական վարքագծի դրսևորումները չեն հասցեագրվել վերոնշյալ դրույթներով, օրինակ՝ բռնության զոհին մշտապես հետևելը կամ անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավելը, հատկապես՝ վիրտուալ տիրույթում: Ըստ էության, հայաստանյան օրենսգրքում բացակայող բաղադրիչը ոչ թե եզակի, առանձին իրադարձությունները, այլև շարունակական վարքագծի դրսևորումները թիրախավորելու հնարավորությունն է:

2024 թվականի փետրվարի 7-ին Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյանը ներկայացրեց նախագիծ՝ առաջարկելով փոփոխություններ կատարել կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանության հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված մի շարք օրենքներում: Նախագիծը հեղինակած անձինք «հետամտումը» ներկայացրեցին որպես առանձին սահմանված բռնի գործողություն և առաջարկեցին այն ներառել քրեական իրավունքի մեջ: Քննարկելով ընտանիքում բռնության կախարգելման վերաբերյալ օրենքի շրջանակն ընդլայնող փոփոխությունները՝ այս հետազոտության համար տված հարցազրույցում տիկին Զարուհի Բաթոյանը նշել է, որ այս օրենսդրական փոփոխության շրջանակներում «հետամտումը» հստակ սահմանված է և նշված է որպես քրեորեն հետապնդելի հանցագործություն: Այն հարցին, թե արդյոք կիբեռհետամտումը սահմանված է այդ օրենսդրական բարեփոխումների շրջանակներում, նա մանրամասնում է, որ նոր սահմանման համաձայն՝ հետամտման բոլոր տեսակները, այդ թվում՝ կիբեռհետամտումը և մնացած տեսակները քրեականացվել են: Ըստ Զարուհի Բաթոյանի՝ օրենքի մեկ այլ արժեքավոր բաղադրիչը «զուգընկեր» գաղափարի սահմանումն էր՝ ընդգրկելով «առցանց զուգընկեր» գաղափարը: Նախկին խմբագրությամբ օրենսդրական ակտերով զուգընկերն այն անձն էր, որի հետ կինը պետք է ունենար ֆիզիկական հարաբերություններ:

Մինչ օրենքի ընդունումը քննարկումներ էին ընթանում, թե արդյոք կա կոնկրետ անհրաժեշտություն սահմանելու, թե ինչ միջոցներով է իրականացվում հետամտումը: Քանի որ քրեական իրավունքն արգելում է հետամտումը հավասարապես բոլորի համար, նախագիծը նախաձեռնողները հստակ նշել են, որ հետամտումը պետք է դիտարկվի որպես գենդերի հիմքով բռնության ձև: Այդ նոր օրենսդրական բարեփոխումները բեկումնային են այդ գործողությունները որպես կանանց իրավունքների խախտում անվանելու հարցում:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը նշում է, որ վերջին տարիներին ընդլայնվել է Հայաստանում կանանց իրավունքներին առնչվող տարբեր օրենքների, կարգավորումների և մեթոդաբանությունների շրջանակը: Թվային ծառայությունները մշակվել են բռնության դեպքերը թափանցիկ կերպով հաշվառելու, հետևելու և արձագանքելու համար՝ դյուրացնելով դրանց հետագա քրեական հետապնդումը: 2024 թվականին նախարարությունը նախատեսում է գործարկել ընտանիքում բռնության դեպքերի հաշվառման թվային հարթակ, որը կօգտագործվի բազմաթիվ պետական կառույցների կողմից: Ակնկալվում է, որ այս համատեղ հարթակը կտրամադրի նոր, ճշգրիտ տվյալներ՝ ընտանիքում բռնության դեպքերն առավել լավ վերլուծելու համար:

Բացի դրանից, տիկին Ստեփանյանը նշել է, որ տեխնոլոգիաների ներկայիս զարգացման, տարբեր հարթակների ու գաջեթների մատչելիության և հասանելիության պայմաններում անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ թվային բռնության վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար:

3.4.4. Հոգեբանական բռնության թվային հարթությունը

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով քրեականացված է միայն ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելը: Այնուամենայնիվ, հոգեբանական վնասի հանգեցնող թվային բռնության դեպքով դեռևս դժվար է հարուցել քրեական հետապնդում, քանի որ երևույթը համապարփակ կերպով սահմանված չէ, և դժվար է ապացուցել «ուժեղ հոգեկան տառապանք» երևույթը: Իրավապահ մարմինների, դատախազների և դատական համակարգի համար նախատեսված ուղեցույցները և ուսուցումը կարող են օգնել այս հիմքով քրեական հետապնդում իրականացնելուն:

4. Միջազգային համագործակցությունը և փոխգործակցությունը

Հնչ վերաբերում է կիբեռտարածության կարգավորումներին՝ Հայաստանի կիբեռանվտանգության ոլորտի օրենսդրությունը զարգացման փուլում է. փորձ է կատարվում ընդլայնել իրավական շրջանակն ու քաղաքականությունը՝ կիբեռսպառնալիքներից առավել լավ պաշտպանություն ապահովելու համար: Ներկայում այն միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և կիբեռանվտանգության կառավարումն ու կիբեռանվտանգության համակարգերի դիմացկունությունը բարելավելու ուղղությամբ նախաձեռնություններ են իրականացվում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կիբեռտարածությունը չունի կոնկրետ սահմաններ, ինչպես օրինակ՝ ցամաքը և ծովը, չափազանց կարևոր է ծավալել միջազգային համագործակցություն՝ կանանց նկատմամբ առցանց բռնության հասցեագրման գործընթացում փոխգործակցությունը խթանելու համար: Այն կարող է ծավալվել երկրների միջև տեղեկությունների և լավագույն փորձի փոխանակման մեխանիզմների մշակման, ինչպես նաև առցանց ոտնձգությունների և բռնարարքների անդրսահմանային դեպքերի քննության ու քրեական հետապնդման համակարգման ուղղությամբ: Եթե Բուդապեշտի կոնվենցիայով նախատեսված՝ գործող մեխանիզմներն ու շրջանակները կիրառելի չլինեն, ապա կարող է անհրաժեշտություն առաջանալ գտնել այդ համագործակցությունը հնարավոր դարձնող լրացուցիչ ուղիներ:

5. Զեկույցում ներկայացված առաջարկությունները

5.1. Իրավական շրջանակը

Անրաժեշտ է ընդլայնել Հայաստանում գործող օրենքների շրջանակը և լրամշակելնել դրանք՝ կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը ներառելու, ինչպես նաև արդյունավետ քրեական հետապնդում և բռնության զոհերին պաշտպանություն ապահովելու համար: Տեխնոլոգիաների զարգացման և դրան ուղեկցող թվային բռնության տարածման դինամիկան չափելու համար օրենսդրությամբ պետք է նախատեսվեն թվային հարթությունում կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում դրա իրականացման և դրա արդյունավետության վերահսկման ու գնահատման մեխանիզմներ: Սա կարող է ենթադրել կանանց նկատմամբ առցանց բռնության հասցեագրման գործընթացում առաջընթացի և կառուցվածքային խտրականության ու կանանց՝ մարդու իրավունքների իրացման խոչընդոտի տեսանկյունից թվային բռնության հասցեագրման գործընթացի կանոնավոր ուսումնասիրության և դրա վերաբերյալ զեկույցներ ներկայացնելու լիազորությամբ օժտված՝ վերահսկողություն իրականացնող մարմինների կամ հանձնաժողովների ստեղծում:

Առաջարկություններ.

- Գնահատել գործող օրենքները՝ ապահովելու համար, որ ընտանիքում թվային գործիքներով իրականացվող բռնություն ներառող գործերով հետամտման, ինչպես նաև հոգեբանական բռնության և ոտնձգության համար սահմանվեն համապատասխան պատասխանատվության միջոցներ:
- Գնահատել ապացուցողական գործողությունների կատարման գործընթացը և դատավարական իրավունքը՝ ապահովելու համար, որ թվային փորձաքննության տվյալները և մյուս ապացույցները ձեռք բերվեն օրենքով սահմանված կարգով և լինեն ընդունելի՝ պատշաճ կերպով հաշվի առնելով խոսքի ազատությանն ու մասնավոր կյանքի անձեռնմխելիությանն առնչվող օրենքները:
- Դատական մարմիններին վերապահել բռնության զոհի դիմումի հիման վրա կատարման համար պարտադիր հրամաններ արձակելու լիազորություն, այդ թվում՝ երրորդ անձանց՝ առանց համաձայնության տարածված ինտիմ նյութերը ջնջելու կամ դրանց հասանելիությունն ուղեփակելու համար:
- Ընդլայնել միջազգային համագործակցության և փոխադարձ իրավական օգնության հնարավորությունները՝ ապահովելով ծառայություններ մատուցողների կողմից պահվող թվային ապացույցների, այդ թվում՝ բաժանորդների տվյալների պարզեցված հասանելիությունը՝ հանցագործության կատարման մեջ օգտագործված հաշվի կամ IP հասցեի օգտատիրոջը բացահայտելու համար:

- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքով նախատեսված ինստիտուցիոնալ մարմիններին վերապահել գենդերային հավասարության և խտրականության բացառման ուղղությամբ աշխատելու լիազորություն, այդ թվում՝ հասցեագրելով կառուցվածքային խտրականության տեսանկյունից կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը՝ որպես խոչընդոտ կանանց՝ մարդու իրավունքների իրացմանը:

5.2. Կանխարգելումը

Իրազեկվածության մակարդակի բարձրացումը, տեղեկությունների տարածումը

Հարցումը ցույց է տվել, որ Հայաստանում թվային բռնության շատ ձևերի և դրանց տարածվածության մասին իրազեկվածության մակարդակը ցածր է: Չկան պետական մակարդակով իրազեկվածության մակարդակի բարձրացման համակարգված արշավներ՝ հանրությանը կամ կոնկրետ խմբերին այս տեսակի հանցագործությունների մասին տեղեկացնելու համար: Սա մեծացնում է այդ հանցագործության զոհ դառնալու հավանականությունը: Կանայք խոչընդոտների են բախվում նաև հաղորդում ներկայացնելիս, քանի որ իրավապահ մարմինները, չունեն արդյունավետ քննություն իրականացնելու համար անհրաժեշտ իրազեկվածություն:

Ավելին, մշակութային նորմերն ու ակնկալիքները կարող են թույլ չտալ կանանց և աղջիկներին հաղորդում ներկայացնել թվային բռնության դեպքերի մասին՝ ամոթի կամ վրեժխնդրության, խարանման և հասարակության մեջ տարածված՝ բռնության զոհերին մեղադրող վերաբերմունքի արժանանալու վախի պատճառով: Տեխնոլոգիաների՝ թվային տիրույթում ճշմարտությունը խեղաթյուրելու և պատկերները կեղծելու հնարավորության մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու միջոցով հնարավոր է կոտրել Հայաստանում կանանց և աղջիկների մասին վնասաբեր կարծրատիպերը:

Առաջարկություններ.

- Նախատեսել իրավական դրույթներ և ֆինանսավորում կանանց նկատմամբ առցանց բռնության առնչությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված կանխարգելիչ միջոցների և կրթական ծրագրերի համար: Սա կարող է իրականացվել թվային գրագիտության և առցանց անվտանգության կրթության բաղադրիչը դպրոցի ուսումնական պլանում ներառելու և հանրային իրազեկման արշավների համար ռեսուրսներ տրամադրելու միջոցով:

- Իրականացնել հասարակության տարբեր մակարդակներում կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված արշավներ՝ թվային ոլորտում կանանց նկատմամբ գործադրվող բռնության տարբեր ձևերի, ինչպես նաև բռնության զոհերին հասանելի աջակցություն ցուցաբերող ծառայությունների վերաբերյալ: Աջակցել կանանց հարցերով զբաղվող կազմակերպությունների՝ այդ ուղղությամբ գործադրվող ջանքերին և ընդունել ու կիրառել նրանց փորձը:
- Խթանել իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված այն արշավների իրականացումը, որոնք մարտահրավեր են նետում վնասաբեր մշակութային նորմերին ու գենդերային կարծրատիպերին և խրախուսում են բռնության զոհերին բարձրաձայնել դրա մասին՝ առանց խարանման վախի:
- Մշակել կանանց և աղջիկներին ուղղված թվային գրագիտության ծրագրեր՝ առցանց պատասխանատու վարքագիծը և թվային ռիսկերի մասին իրազեկվածությունը խթանելու համար: Տեղեկացնել տեխնոլոգիաների՝ մեծ քանակությամբ տվյալներ կուտակելու և անձնական պատկերներ, տվյալներ ու տեսանյութեր կեղծելու հնարավորությունների մասին, քանի որ դրանք կարող են չարամտորեն գործածվել կեղծ արտադրանք ստանալու, տարածելու, կանանց ու աղջիկներին թիրախավորելու նպատակով:

5.3. Պաշտպանությունը

Վերը նշված կանխարգելում և պաշտպանություն բաժինների ներքո ներկայացված պահանջները որոշ չափով համընկնում են: Պաշտպանության առումով աջակցություն ցուցաբերող ծառայությունների առկայությունը շատ կարևոր է, և այդ ծառայությունները պետք է կարողանան հասկանալ խնդիրը և արձագանքել դրան:

Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ները և Կանանց աջակցման կենտրոնները, որոնք անհրաժեշտ աջակցության ծառայություններ են մատուցում բռնության ենթարկված կանանց, շատ սահմանափակ ուղղություն և տեխնիկական գործիքներ կամ տեխնոլոգիաներ ունեն, որոնք անհրաժեշտ են կիբեռտարածությունում կատարվող հանցագործությունները և կանանց իրավունքների խախտումները դասակարգելու, բացահայտելու և դրանցից պաշտպանվելու կամ բռնության զոհերի իրավունքներն ու հնարավորություններն ընդլայնելու և նրանց վերականգմանն աջակցելու համար: Աջակցություն ցուցաբերող այդ կազմակերպություններին պետք է օգնել թվային տիրույթում արձանագրված միջադեպերով պայմանավորված տրավմաների դեպքում աջակցության, ինչպես նաև խնամքի ու հոգեբանական օգնության տրամադրման հարցում, ուղղորդել կանանց, թե որ դեպքերում պետք է հաղորդում ներկայացնել ոստիկանություն: Ավելին, Հայաստանը ներկայումս չունի համակարգչային արտակարգ իրավիճակների արձագանքման թիմ (CERT) կամ ուղղորդման կենտրոններ, որոնք հատուկ պատրաստված են կանանց նկատմամբ բռնությունը ճանաչելու և հարկ եղած դեպքում օգնություն ցուցաբերելու համար: Անհրաժեշտ է զարգացնել իրավապահ մարմինների,

CERT-երի, համապատասխան ՀԿ-ների և աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների միջև միջգերատեսչական համագործակցությունը՝ թվային դատական փորձաքննությունների արդյունավետությունը բարձրացնելու համար՝ նպատակ ունենալով դադարեցնել թվային հանցագործությունները և բարելավել դրանց բացահայտումը:

Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ները և Կանանց աջակցման կենտրոնները վերհանել են ուսուցման և կարողությունների զարգացման, այդ թվում՝ տեխնիկական հմտություններում և սարքավորումներում ներդրումներ կատարելու իրական անհրաժեշտություն, որոնք հնարավորություն են տալիս գտնել, հետևել և կասեցնել կիբեռհանցագործներին: Անհրաժեշտ է զարգացնել և ընդլայնել աջացկություն ցուցաբերող ծառայությունների իրազեկվածության մակարդակը թվային բռնության վերաբերյալ, ինչպես նաև՝ ուսուցումների և ռեսուրսների միջոցով խորհրդատվության, իրավական օգնության տրամադրման և անվտանգ հաղորդում ներկայացնելու մեխանիզմները:

Առաջարկություններ.

- Ստեղծել ինստիտուցիոնալացված համագործակցության և փոխգործակցության մեխանիզմներ՝ բոլոր համապատասխան պետական գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների և մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայությունների ներգրավմամբ:
- Ապահովել համապատասխան կազմակերպությունների, ընդհանուր և մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայությունների ուսուցումը և դրանց կարողությունների զարգացումը, ինչը հնարավորություն կտա բացահայտել ու արձագանքել կանանց նկատմամբ բռնության թվային հարթության դեպքերին:
- Ազգային և տեղական ինքնակառավարման մարմիններին, համապատասխան աջակցություն ցուցաբերող կազմակերպություններին, այդ թվում՝ կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ներին հատկացնել բավարար մարդկային ու ֆինանսական ռեսուրսներ՝ առցանց և տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ կանանց նկատմամբ գործադրվող բռնության դեպքերն արդյունավետորեն կանխելու, թվային բռնությունից պաշտպանելու և դրա առնչությամբ քրեական հետապնդում հարուցելու համար:

5.4. Քրեական հետապնդումը

Հարցմամբ պարզվել է, որ իրավապահ մարմինների ծառայողների, բռնության զոհերի և աջակցություն ցուցաբերող ծառայությունների՝ խնդրի մասշտաբի ընկալման միջև առկա է հստակ տարբերություն: Այնուամենայնիվ, իրավապահ մարմինների ծառայողներն ընդունում են ուսուցման և կարողությունների զարգացման անհրաժեշտությունը: Պարզվում է, որ կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունները հասցեագրելու համար

կա գործող օրենքը կիրառելու և բռնության զոհերի՝ առանց լրացուցիչ վնաս պատճառելու թվային ապացույցները լավագույնս հավաքագրելու, պահպանելու և օգտագործելու փորձի ու ռեսուրսների պակաս:

Հարցմամբ պարզվել է նաև, որ իրավապահ մարմինների ծառայողները այնքան էլ հստակ չեն պատկերացնումթվային ոլորտում կանանց նկատմամբ բռնության աստիճանը՝ որպես կանանց նկատմամբ գենդերի հիմքով բռնության ձև: Ռեսպոնդենտների 95%-ը համարել է մասնագիտական պատրաստումն ու կրթությունն ամենակարևոր բաղադրիչը և առաջարկել է իրականացնել միջազգային փոխանակման ծրագրեր՝ կանանց նկատմամբ բռնության թվային հարթության բացահայտման և բռնության զոհերի պաշտպանության ուղղությամբ իրենց կարողությունները զարգացնելու համար: 2020 և 2021 թվականներին դատավորների, դատավորների թեկնածուների, դատախազների և քննիչների ուսուցման տարեկան ծրագրերը ներառում էին կանանց և ընտանիքում բռնության կանխարգելմանն ու պայքարին վերաբերող դասընթացներ (ԿՆԽՎԿ, 2022(բ)): Այդ դասընթացները կարող են փոփոխվել՝ ներառելու համար կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունների և առաջացող անդրսահմանային խնդիրների վերաբերյալ ուսուցման դասընթացներ:

Առաջարկություններ.

- Գնահատել գործող քրեական իրավունքը և ուղղություն ցույց տալ իրավապահ մարմիններին և քրեական արդարադատության դերակատարներին, թե ինչպես այն կարող է փոփոխվել՝ կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունները հասցեագրելու համար:
- Գնահատել դատավորների, դատավորների թեկնածուների, դատախազների և քննիչների տարեկան ուսուցման ծրագրերի բովանդակությունը և ապահովել, որ այն ներառի կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության թվային և անդրսահմանային հարթությունները:
- Ապահովել, որ քննիչներն ունենան ապացույցների հավաքագրման և օգտագործման այնպիսի ձևանմուշներ, որոնք հարգում են բռնության զոհի կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Ապահովել թվային ապացույցների հավաքագրման և պահման քրեագիտական հայեցակետերի վերաբերյալ ուսուցում:
- Ընդլայնել թվային ոլորտում քրեական արդարադատության դերակատարների միջազգային համագործակցության և փոխադարձ իրավական օգնության կարողությունները:
- Մշակել համագործակցության մեխանիզմներ, որոնք կապահովեն իրավապահների և քրեական արդարադատության դերակատարների, քաղաքացիական արդարադատության դերակատարների և կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարով զբաղվող ընդհանուր և հատուկ աջակցություն ցուցաբերող ծառայությունների ու կազմակերպությունների միջև միջգերատեսչական համագործակցությունը:

- Ապահովել ՏՀՏ ոլորտի և համացանցային միջնորդների ներգրավումը թվային ոլորտում կանանց նկատմամբ բռնություն գործադրող անձին պատասխանատվության ենթարկելու ջանքերում վնասաբեր բովանդակության առնչությամբ օգտատերերի կողմից հաղորդում ներկայացնելու համար նախատեսված բողոքարկման մեխանիզմների, բովանդակության կանոնակարգման հուսալի քաղաքականության և իրավապահ մարմինների հետ համագործակցության վերաբերյալ աշխատանքային պայմանավորվածությունների միջոցով:

5.5. Համակարգված քաղաքականությունը

Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության հասցեագրման համար անհրաժեշտ է համապարփակ մոտեցում, որը թվային քաղաքականությունն ինտեգրում է կանանց իրավունքների ոլորտում գործող իրավական շրջանակներին և քրեական կարգավորումներին: Այս ինտեգրումը չափազանց կարևոր է համապարփակ պաշտպանություն, հաշվետվողականություն ապահովելու, ինչպես նաև անվտանգ թվային միջավայրի ստեղծումը խթանելու համար: Հայաստանի վերանայված իրավական շրջանակը, որն ընդգրկում է թե՛ քրեական իրավունքը, թե՛ ընտանիքում բռնության մասին օրենքը, ներառում է կանանց և աղջիկների նկատմամբ բռնության ձևերի քրեական հետապնդման դրույթներ, այնուամենայնիվ, թվային բռնության բաղադրիչը հաճախ մանրակրկիտ կամ բավարար կերպ ներառված չէ: Քաղաքականությամբ պետք է սահմանվեն կանանց նկատմամբ թվային բռնության գործադրման մեթոդները, դրա քննության, թվային փորձաքննության և քրեական հետապնդման արձանագրությունները, ինչպես նաև բռնության զոհերի հատուկ կարիքները:

Համապատասխան ազգային փաստաթղթերը, ծրագրերը, գործողությունների ծրագրերը կարող են գնահատվել՝ ապահովելու համար, որ դրանք ներառեն կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունները, ինչպես նաև նախատեսեն համապատասխան համագործակցության մեխանիզմների մշակում՝ մասնավոր և ՏՀՏ ոլորտի հետ ներգրավվածությունն ապահովելու համար:

Առաջարկություններ.

- Ապահովել կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունների ներառումը կանանց նկատմամբ բռնության ազգային ռազմավարություններում, ծրագրերում և գործողությունների ծրագրերում:

- Իրականացնել կանանց նկատմամբ բռնության թվային հարթության վերաբերյալ քանակական և որակական հետազոտական ծրագրեր ու ուսումնասիրություններ կամ աջակցել դրանց իրականացմանը՝ խնդրի չափն ու բնույթը հասկանալու համար, ինչպես նաև գնահատել այդ բռնության ֆինանսական, անձնական և սոցիալական ազդեցությունների, այդ թվում՝ ինքնագրաքննության և թվային մեկուսացման մակարդակը:
- Խրախուսել մասնավոր և ՏՀՏ ոլորտի մասնակցությունը քաղաքականությունների մշակմանն ու իրականացմանը, համապատասխան եվրոպական և մարդու իրավունքների դրույթներին համահունչ ուղեցույցեր ու ինքնակարգավորման չափանիշներ սահմանելուն՝ թվային ոլորտում կանանց նկատմամբ բռնությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու համար:

6. Եզրակացություն

Կանանց նկատմամբ թվային բռնությունը հասունացող խնդիր է Հայաստանում, որը պահանջում է համապարփակ և բազմաոլորտ արձագանքման միջոցների ձեռնարկում: Կատարելով սույն զեկույցում ներկայացված առաջարկությունները և հետևելով Եվրոպայի խորհրդի կողմից և այլ միջազգային փաստաթղթերով սահմանված սկզբունքներին ու ուղեցույցերին՝ Հայաստանը կարող է զգալի առաջընթաց արձանագրել թվային հարթությունում կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղղությամբ՝ թվային դարաշրջանում ապահովելով կանանց և աղջիկների անվտանգությունը, արժանապատվությունն ու իրավունքները:

7. Զեկույցում ներկայացված առաջարկությունների ամփոփ նկարագիրը

7.1. Իրավական շրջանակը

Ընդլայնել օրենքների շրջանակը և լրամշակել դրանք՝ թվային բռնության բաղադրիչն ընդգրկելու և կանանց ու աղջիկների նկատմամբ թվային բռնության դեմ պայքարի վերաբերյալ օրենքների արդյունավետ կատարումն ապահովելու համար՝ այն պատշաճ կերպով կանխարգելելու, դրանից պաշտպանվելու և դրա առնչությամբ քրեական հետապնդում հարուցելու նպատակով: Այդ պատճառով անհրաժեշտ է՝

- Գնահատել գործող օրենքները՝ ապահովելու համար, որ ընտանիքում թվային բռնություն ներառող գործերով հետամտման, ինչպես նաև հոգեբանական բռնության և ոտնձգության համար սահմանվեն համապատասխան պատասխանատվության միջոցներ:
- Գնահատել ապացուցողական գործողությունների կատարման գործընթացը և դատավարական իրավունքը՝ ապահովելու համար, որ թվային փորձաքննության տվյալները և մյուս ապացույցները ձեռք բերվեն օրենքով սահմանված կարգով և լինեն ընդունելի՝ պատշաճ կերպով հաշվի առնելով խոսքի ազատությանն ու մասնավոր կյանքի անձեռնմխելիությանն առնչվող օրենքները:
- Դատական մարմիններին վերապահել բռնության զոհի դիմումի հիման վրա կատարման համար պարտադիր հրամաններ արձակելու լիազորություն, այդ թվում՝ երրորդ անձանց՝ առանց համաձայնության տարածված ինտիմ նյութերը ջնջելու կամ դրանց հասանելիությունն ուղեփակելու համար:
- Ընդլայնել միջազգային համագործակցության և փոխադարձ իրավական օգնության հնարավորությունները՝ ապահովելով ծառայություններ մատուցողների կողմից պահվող ապացույցների, այդ թվում՝ բաժանորդների տվյալների պարզեցված հասանելիությունը՝ հանցագործության կատարման մեջ օգտագործված հաշվի կամ IP հասցեի օգտատիրոջը բացահայտելու համար:
- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքով նախատեսված ինստիտուցիոնալ մարմիններին վերապահել գենդերային հավասարության և խտրականության բացառման ուղղությամբ աշխատելու լիազորություն՝ հասցեագրելով կառուցվածքային խտրականության տեսանկյունից կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը՝ որպես խոչընդոտ կանանց՝ մարդու իրավունքների իրացմանը:

7.2. Կանխարգելումը

- Գնահատել, թե արդյոք օրենսդրությամբ ներառված են կանանց նկատմամբ առցանց բռնության առնչությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված կանխարգելիչ միջոցների և կրթական ծրագրերի վերաբերյալ դրույթներ: Սա կարող է իրականացվել թվային գրագիտության և առցանց անվտանգության կրթության բաղադրիչը դպրոցի ուսումնական պլանում ներառելու և հանրային իրազեկման արշավների համար ռեսուրսներ տրամադրելու միջոցով:
- Իրականացնել հասարակության տարբեր մակարդակներում կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված արշավներ՝ թվային ոլորտում կանանց նկատմամբ գործադրվող բռնության տարբեր ձևերի, ինչպես նաև բռնության զոհերին հասանելի աջակցություն ցուցաբերող ծառայությունների վերաբերյալ: Աջակցել կանանց հարցերով զբաղվող կազմակերպությունների՝ այդ ուղղությամբ գործադրվող ջանքերին և ընդունել ու կիրառել նրանց փորձը:
- Խթանել իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված այն արշավների իրականացումը, որոնք մարտահրավեր են նետում վնասաբեր մշակութային նորմերին և խրախուսում են բռնության զոհերին բարձրաձայնել դրա մասին՝ առանց խարանման վախի:
- Տեղեկացնել տեխնոլոգիաների՝ մեծ քանակությամբ տվյալներ կուտակելու և անձնական պատկերներ, տվյալներ ու տեսանյութեր կեղծելու հնարավորությունների մասին, քանի որ դրանք կարող են չարամտորեն գործածվել կեղծ արտադրանք ստանալու, տարածելու, կանանց ու աղջիկներին թիրախավորելու նպատակով:

7.3. Պաշտպանությունը

- Ստեղծել ինստիտուցիոնալացված համագործակցության և փոխգործակցության մեխանիզմներ՝ բոլոր համապատասխան պետական գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների և մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայությունների ներգրավմամբ:
- Ապահովել համապատասխան կազմակերպությունների, ընդհանուր և մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայությունների ուսուցումը և դրանց կարողությունների զարգացումը, ինչը հնարավորություն կտա բացահայտել ու արձագանքել կանանց նկատմամբ բռնության թվային հարթության դեպքերին:
- Ազգային և տեղական ինքնակառավարման մարմիններին, համապատասխան աջակցություն ցուցաբերող կազմակերպություններին, այդ թվում՝ կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին հատկացնել բավարար մարդկային ու ֆինանսական ռեսուրսներ՝ առցանց և տեխնոլոգիաների

օգտագործմամբ՝ կանանց նկատմամբ գործադրվող բռնության դեպքերն արդյունավետորեն կանխելու, բռնությունից պաշտպանելու և դրա առնչությամբ քրեական հետապնդում հարուցելու համար:

7.4. Քրեական հետապնդումը

- Գնահատել գործող քրեական իրավունքը և ուղղություն ցույց տալ իրավապահ մարմիններին և քրեական արդարադատության դերակատարներին, թե ինչպես այն կարող է փոփոխվել՝ կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունները հասցեագրելու համար:
- Գնահատել դատավորների, դատավորների թեկնածուների, դատախազների և քննիչների տարեկան ուսուցման ծրագրերի բովանդակությունը և ապահովել, որ այն ներառի կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության թվային և անդրսահմանային հարթությունները:
- Ապահովել, որպեսզի քննիչներն ունենան ապացույցների հավաքման և օգտագործման այնպիսի ձևանմուշներ, որոնք հարգում են բռնության զոհի կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Ապահովել թվային ապացույցները հավաքելու և պահելու քրեագիտական հայեցակարգերի վերաբերյալ ուսուցում:
- Ընդլայնել քրեական արդարադատության դերակատարների միջազգային համագործակցության և փոխադարձ իրավական օգնության կարողությունները:
- Մշակել համագործակցության մեխանիզմներ, որոնք կապահովեն իրավապահների և քրեական արդարադատության դերակատարների, քաղաքացիական արդարադատության դերակատարների և կանանց նկատմամբ թվային բռնության դեմ պայքարով զբաղվող ընդհանուր և հատուկ աջակցություն ցուցաբերող ծառայությունների ու կազմակերպությունների միջև միջգերատեսչական համագործակցությունը:
- Ապահովել ՏՀՏ ոլորտի և համացանցային միջնորդների ներգրավումը թվային ոլորտում կանանց նկատմամբ բռնություն գործադրող անձին պատասխանատվության ենթարկելու ջանքերում վնասաբեր բովանդակության առնչությամբ օգտատերերի կողմից հաղորդում ներկայացնելու համար նախատեսված բողոքարկման մեխանիզմների, բովանդակության կանոնակարգման հուսալի քաղաքականության և իրավապահ մարմինների հետ համագործակցության վերաբերյալ աշխատանքային պայմանավորվածությունների միջոցով:

7.5. Համակարգված քաղաքականությունը

- Ապահովել կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունների ներառումը կանանց նկատմամբ բռնության ազգային ռազմավարություններում, ծրագրերում և գործողությունների ծրագրերում:
- Իրականացնել կանանց նկատմամբ բռնության թվային հարթության վերաբերյալ քանակական և որակական հետազոտական ծրագրեր ու ուսումնասիրություններ կամ աջակցել դրանց իրականացմանը՝ խնդրի չափն ու բնույթը հասկանալու համար, ինչպես նաև գնահատել այդ բռնության ֆինանսական, անձնական և սոցիալական ազդեցությունների, այդ թվում՝ ինքնագրաքննության և թվային մեկուսացման մակարդակը:
- Խրախուսել մասնավոր և ՏՀՏ ոլորտի մասնակցությունը քաղաքականությունների մշակմանն ու իրականացմանը, համապատասխան եվրոպական և մարդու իրավունքների դրույթներին համահունչ ուղեցույցեր ու ինքնակարգավորման չափանիշներ սահմանելուն՝ թվային ոլորտում կանանց նկատմամբ բռնությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու համար:

8. Հղումներ

Եվրոպայի խորհուրդ

ԵԽՊԾ թիվ 185, Կիբեռհանցագործության մասին Բուդապեշտի կոնվենցիա:

ԵԽՊԾ թիվ 201, Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիա (Լանզարոտեի կոնվենցիա):

ԵԽՊԾ թիվ 210, Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Ստամբուլի կոնվենցիա):

«Սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված CM/REC (2019) 1 առաջարկություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/cm-rec-2019-1-on-preventing-and-combating-sexism/168094d894, [մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 2-ին]:

2022 թվականի մայիսի 20-ին ընդունված «Ատելության խոսքի դեմ պայքարի մասին» Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված CM/REC (2022)16 առաջարկություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://search.coe.int/cm?i=0900001680a67955, [մուտքը՝ 2024 թվականի հունիսի 25-ին]:

Եվրոպայի խորհուրդ (2021ա), «Կանանց և աղջիկների պաշտպանությունը բռնությունից թվային դարաշրջանում», Ադրիան վան դեր Ուիլկ, Եվրոպայի խորհուրդ (2021թ.), https://edoc.coe.int/en/violence-against-women/10686-protecting-women-and-girls-from-violence-in-the-digital-age.html, [մուտքը՝ 2024 թվականի հունիսի 25-ին]:

Եվրոպայի խորհուրդ (2021բ), Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ Հայաստանում ոստիկանության ծառայողների վերապատրաստման ձեռնարկ, 2021 թվականի նոյեմբեր, հասանելի է հետևյալ հղմամբ՝ RR:

Եվրոպայի խորհուրդ (2022թ.), «EDVAW հարթակի յոթ մեխանիզմների միջոցով հաստատագրված՝ կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը», Եվրոպայի խորհուրդ (2022թ.), https://rm.coe.int/thematic-report-on-the-digital-dimension-of-violence-against-women-as-/1680a933ae, [մուտքը՝ 2024 թվականի հունիսի 25-ին]:

ԵԽՎՀ, 2017ա, «Կիբեռխտրականությունը և առցանց ատելությունը վերացնելու մասին» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2098(2017) առաջարկություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://pace.coe.int/en/files/23456, [մուտքը՝ 2024 թվականի հունիսի 25-ին]:

ԵԽՎՀ, 2017բ, «Կիբեռխտրականությունը և առցանց ատելությունը վերացնելու մասին» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2144(2017) բանաձև, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=23456&lang=en, [մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 2-ին):

ԵԽՎՀ, 2017գ, «Հանրային վայրերում կանանց նկատմամբ սեռական բռնությանը և ոտնձգությանը վերջ դնելու մասին» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2177 (2017) բանաձև, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://pace.coe.int/en/files/23977, [մուտ-

քը՝ 2024 թվականի հունիսի 25-ին]:

EDVAW, 2022թ., «Կանանց նկատմամբ խտրականության և բռնության հարցերով անկախ փորձագիտական հարթակի յոթ մեխանիզմների միջոցով հասցեագրված՝ կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը» (EDVAW հարթակ), Եվրոպայի խորհուրդ (2022թ.), https://rm.coe.int/thematic-report-on-the-digital-dimension-of-violence-against-women-as-/1680a933ae:

ՌԱԵՀ, 2015թ., «Ատելության դեմ պայքարի մասին» ՌԱԵՀ-ի ընդհանուր քաղաքականության թիվ 15 առաջարկություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.coe.int/en/web/european-commission-against-racism-and-intolerance/recommendation-no.15, [մուտքը՝ 2024 թվականի հունիսի 25-ին]:

ԳՐԵՎԻՈ, 2021թ., «Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության մասին» ԳՐԵՎԻՈ-ի թիվ 1 ընդհանուր առաջակություն, https://rm.coe.int/grevio-rec-no-on-digital-violence-against-women/1680a49147, [մուտքը՝ 2024 թվականի հունիսի 25-ին]:

Վան դեր Ուիլկ, 2021թ., «Կանանց և աղջիկների պաշտպանությունը բռնությունից թվային դարաշրջանում» ուսումնասիրություն, Ադրիան վան դեր Ուիլկ, Եվրոպայի խորհուրդ (2021թ.):

ՄԻԵԴ գործեր

Վոլոդինան ընդդեմ Ռուսաստանի գործ (թիվ 2). Գանգատ թիվ 40419/19, ՄԻԵԴ, 2021 թվականի սեպտեմբերի 14:

Միավորված ազգերի կազմակերպություն

ԿՆԽՎԿ,1981թ., Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/sites/default/files/Documents/ProfessionalInterest/cedaw.pdf:

Կամընտիր արձանագրություն:

Պեկինի գործողությունների հարթակ, 1995թ.:

ԿՆԽՎԿ,1981թ., Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/sites/default/files/Documents/ProfessionalInterest/cedaw.pdf:

ԿՆԽՎԿ,1992թ., Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտե (ԿՆԽՎԿ), ԿՆԽՎԿ-ի թիվ 19 ընդհանուր առաջարկություն. Կանանց նկատմամբ բռնությունը, 1992թ., https://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/index.html, [մուտքը՝ 2024 թվականի հունիս 25-ին]:

ԿՆԽՎԿ, 2017ա, «Թիվ 19 ընդհանուր առաջարկությունը թարմացնող՝ կանանց նկատմամբ գենդերի հիմքով բնության մասին» թիվ 35 (2017) CEDAW/C/GC/35 ընդհանուր առաջարկություն (1992թ.), https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/general-recommendation-no-35-2017-gender-based, [մուտքը՝ 2024 թվականի հունիսի 25-ին]:

ԿՆԽՎԿ, 2017բ, «Կանանց և աղջիկների կրթության իրավունքի մասին» թիվ 36 (2017) CEDAW/C/GC/36 ընդհանուր առաջարկություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/general-recommendation-no-36-2017-right-girls-and, [մուտքը՝ 2024 թվականի հունիսի 25-ին]:

ԿՆԽՎԿ, 2022ա, Հայաստանի յոթերորդ պարբերական զեկույցի CEDAW/C/ARM/CO/7 ամփոփիչ դիտարկումները, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://documents.un.org/doc/undoc/gen/n22/666/21/pdf/n2266621.pdf?token=TM6xrug1fUPfhxZpzy&fe=true, [մուտքը՝ 2024 հունիսի 25-ին]:

ԿՆԽՎԿ, 2022բ, «Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի փորձագետները ողջունում են Հայաստանին ի հեճուկս հակամարտությանը միջազգային պարտավորությունների կատարումը շարունակելու, կանանց նկատմամբ բռնության և ընտանիքի պլանավորման ծառայության մասին բարձրաձայնելու համար», 2022 թվականի հոկտեմբերի 13, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/en/news/2022/10/experts-committee-elimination-discrimination-against-women-commend-armenia-continuing, [մուտքը՝ 2024 թվականի հունիսի 25-ին]:

Չաունդհուրի, 2023թ., Չաունդհուրի, Ռումման, Լակշմի Դհանյա, ՅՈՒՆԵՍԿՕ (2023թ.) «Տեխնոլոգիաների օգտագործմամբ գործադրվող՝ գենդերի հիմքով բռնությունը գեներատիվ արհեստական բանականության դարաշրջանում», հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000387483:

Հայաստանի օրենքներ

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=138982:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672:

Հայաստանի Հանրապետության ազգային ժողով, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, http://parliament.am/draftreading_docs8/P-743_DR2.pdf:

Գրականություն

Սահակյան Մ., խմբագիր: Չինական և եվրասիական միջազգային հարաբերությունների Ռոութլեջի ձեռնարկ (1-ին հրատարակչություն): Ռոութլեջ https://doi.org/10.4324/9781003439110:

Կայքեր

«Statista» վիճակագրական հարթակ, 2024, «Statista», Թվային և կապակցվածության ցուցանիշները Հայաստանում, https://www.statista.com/outlook/co/digital-connectivity-indicators/armenia, [մուտքը՝ 2024 թվականի հուլիսի 2-ին]:

Կիբեռիրավունքներ, 2024թ., պաշտոնական կայք, «Ինտիմ պատկերների՝ առանց համաձայնության տարածումից տուժած անձինք», https://cyberights.org/ncii-90-of-victims-of-the-distribution-of-non-consensual-intimate-imagery-are-women/, [մուտքը՝ 2024 թվականի հունիսի 25-ին]:

Զեկույցը ընդգծում է Հայաստանում մի շարք կարևոր իրավական և ինստիտուցիոնալ փոփոխությունների անհրաժեշտությունը՝ թվայնացման ու արագ զարգացող այս շրջափուլի սպառնալիքին դիմակայելու համար: Այն նաև առաջ է քաշում լրացուցիչ միջոցառումներ ու մեխանիզմներ, որոնք առանցքային են թվային բռնության ձևերի մասին իրազեկվածության բարձրացման և գենդերային բռնության զոհերի և բռնարարների հետ աշխատող բոլոր մասնագետների կարողությունների զարգացման համար, որպեսզի վերջիններս արդյունավետորեն բացահայտեն և արձագանքեն կանանց և աղջիկների նկատմամբ բռնության բոլոր ձևերին, որոնք առաջանում են տեխնոլոգիաների արագ զարգացման և կիրառման արդյունքում:

HYE

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի:
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումը անդամ պետություններում:

www.coe.int

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE